

ՀՈՒՅՄ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Հայկական հարցի վերջնական լուծման միակ ուղին



Արցախյան հարցը
բանակցային լուծում չունի
Պիտի վերացնել պատմական
զավթիչ ոճրագործներին

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....9
- 4- Միլիոնը.....15
- 5- Միջազգային.....16

Պարսկերեն բաժին

Աղվանք, Ադրբեջանի ոճագործություն.....0-2

Ճապիկի առաջին էջում՝ Միայն պատերազմ

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 232, Փետրվար 2018 No. 232, February 2018

ماهنامه لويس - شماره ۲۳۲ اسفند ماه ۱۳۹۶

Մշակութային և Հասարակական Ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Դարախանյան, Վահիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան

Փոստարկղ 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لويس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغدادساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

Թուրքիան և Ադրբեջանը մեկ նպատակ են հետապնդում՝ հայերին ոչնչացնելու. Լարիսա Ալավերդյան



Թուրքիան և Ադրբեջանը մեկ նպատակ են հետապնդում՝ «լուծել» հայկական հարցը: Այս մասին «Մեդիակենտրոնում» կայացած մամուլի ասուլիսում ասաց Հայաստանի առաջին օմբուդսմեն Լարիսա Ալավերդյանը:

Նրա խոսքով՝ անցյալ դարի վերջին Սումգայիթում, Բաքվում, Ադրբեջանի այլ քաղաքներում հայերի ջարդերը Թուրքիայի կողմից սկսված Հայոց ցեղասպանության շարունակությունն էին:

«Ադրբեջանի և Թուրքիայի համար առանձին դարաբաղյան հարց չկա: Կա հայերին ոչնչացնելու հարցը: Սա սկսվել է Օսմանյան և շարունակվել դեմոկրատական Թուրքիայում: Կարելու չէ՝ Ադրբեջանը անկախ է, թե խորհրդային, մոտեցումները նույնն են: Ինչպես վերջերս հայտարարեց Իլհամ Ալիևը, ռազմավարական նպատակը Հայաստանի տարածքները ձեռք գցելն է», - հայտարարեց Ալավերդյանը: Այս կապակցությամբ նա հիշեցրեց, որ 2019 թվականին Ադրբեջանը, դիմելով Փարիզյան համաժողովին, ներկայացրել էր Բաքվից մինչև Բաթումի իր տարածքները՝ ընդգրկելով թուրքական Իգդիրը, Դադստանը, Վրաստանի շրջանները:

Նրա խոսքով՝ անհրաժեշտ է Հայաստանի խորհրդարանի հայտարարություն ընդունել, որի մեջ ամեն ինչ իրենց անուններով կկոչվեն: Եվ սպանդի հետևանքով տուժածներին հատուկ կարգավիճակ տալ: «Արցախի հարցը պետք է դիտարկել ոչ թե որպես ինքնորոշման հարց, այլ Ադրբեջանի կազմակերպած ցեղասպանությունից փրկության», - շեշտեց Ալավերդյանը:

Հընթացս նա կարծիք հայտնեց հարցի քննարկումը ԵԱՀԿ ՄԽ-ից այլ ձեռաչափ տեղափոխելու անհրաժեշտության մասին: Հատկապես ինչպիսի՞ Ալավերդյանը չհայտնեց: «Գոյություն ունեցող ձեռաչափը բերում է պարիտետի փորձերի: Ո՞ւմ մտքով կանցնի ֆաշիստների և հրեաների հաշտեցման կոչեր անել», - նշեց Լարիսա Ալավերդյանը:

Հայաստանի Հանրապետություն

Նիդերլանդների խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը



Նիդերլանդների խորհրդարանի ստորին պալատի անդամները հավանություն են տվել Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեռին, հաղորդում է AP-ն: Յոել Ֆորդելինդի հեղինակած փաստաթղթերը խորհրդարանում մեծամասնության աջակցություն են ստացել: Միևնույն ժամանակ, արտգործնախարարի պաշտոնակատար Սիգրիդ Կաագը նշել է, որ Նիդերլանդների կառավարությունը չի հետևի խորհրդարանի օրինակին: Նրա խոսքով՝ կառավարությունը «շարունակելու է զսպվածություն ցուցաբերել»: Խորհրդարանականները նաև որոշել են, որ կառավարության անդամը կմասնակցի ապրիլի 24-ին Երևանում հիշատակի միջոցառումներին, հաղորդում է NOS-ը:

«Իսկանդերները» շարունակում են Ադրբեջանին անհանգստացնել



Ադրբեջանը սաստիկ անհանգստանում է հայկական «Իսկանդերների» առիթով: Ձգտելով պոտենցիալ սպառնալիքը չեզոքացնել՝ ադրբեջանական կողմը շարունակում է սպառնալիքներ ցուցնել՝ հրնթացս ցանկալին իրականի տեղ ներկայացնելով:

Ինչպես հայտնում է Haaretz-ը, վկայակոչելով Yedioth Ahronoth պարբերականը, Իսրայելի պաշտպանության նախարար Ավիգդոր Լիբերմանը ռազմական գերատեսչությանը հանձնարարել է մինչև 300 կմ մեծացված հեռահարությամբ հող-հող դասի հրթիռներ մշակել: Հրթիռները պետք է օգտագործվեն ցամաքային գործերի սպառնալիքի մեջ: Լիբերմանը հավանություն է տվել նոր նախագծին 500 մլն դոլարի հատկացմանը: Հաղորդագրությունների համաձայն՝ նախագծի նպատակն է միջին հեռահարության հրթիռների ստեղծումը: Նախագիծը նախ կներառի 150 կմ հեռահարությամբ հրթիռներ,

հատկապես EXTRA (Extended-range artillery), որոնք խրայելական ընկերություններն արդեն արտադրում են արտասահմանյան դաշնակիցների համար: Այնուհետև ծրագրվում է հրթիռների հեռահարությունը մեծացնել մինչև 300 կմ: Նախագծի արժեքը կարող է կազմել մոտ 2 մլրդ դոլար:

Ադրբեջանական լրավամիջոցները, բնականաբար, այս հաղորդագրությանն արձագանքել են՝ հիշեցնելով, որ «500 կմ հեռահարությամբ հրթիռների ձեռքբերման առումով պաշտոնական Բաքվի շահերի շրջանակում՝ ի պատասխան Հայաստանի ՉՈՒ-ի գինմանը «Իսկանդեր» օպերատիվ-տակտիկական հրթիռային համալիրներով չի կարելի բացառել, որ Ադրբեջանի Պաշտպանության նախարարությունը առարկայական հետաքրքրություն դրսևորի Իսրայելից մեծացված հեռահարությամբ նոր հրթիռային համալիրի գնման նկատմամբ»: Ըստ որում՝ որոշ լրատվամիջոցներ շտապել են հայտարարել, որ «Իսրայելն արդիականացնում է Ադրբեջանին վաճառած հրթիռները», չնայած խոսքը մոդելի մասին է, բայց ոչ մի դեպքում ոչ վաճառված սպառնալիքի:

Ալիևը շահագրգռված չէ նոր լայնածավալ պատերազմով Ղարաբաղում. փորձագետ




Ադրբեջանի իշխանությունները շահագրգռված չեն Ղարաբաղում նոր լայնածավալ պատերազմով: Այս մասին փետրվարի 9-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Արման Նավասարդյանը: Նրա խոսքով՝ Եվրոպական մի շարք պետություններ Ադրբեջանին 4 մլրդ դոլարի չափով ներդրումներ են հատկացրել տրանսատլանտյան գազատարի կառուցման համար: «Դրանից 6 միլիարդ խորանարդ մետրը կուղղվի դեպի Եվրոպա, իսկ 10 միլիարդը՝ կգան Թուրքիայի կողմ», - ասաց Նավասարդյանը: Միևնույն ժամանակ, ինչպես նշեց փորձագետը, որքան էլ որ Ալիևը նոր պատերազմ չցանկանա եւ ինչ էլ որ նա չխոստանա ներքին լսարանին, լայնածավալ պատերազմ սկսելու համար Ադրբեջանն իրական հնարավորություններ չունի, քանի որ դրա պատճառով գազատարը կարող է տուժել, որի կառուցման համար հսկայական միջոցներ են հատկացվել եւ որն ակնհայտ եւ հեշտ թիրախ կարող է դառնալ հայկական կողմի համար:

Նա ընդգծեց, որ գազամուղի ուղղությամբ հարվածի դեպքում ադրբեջանական կողմը ստիպված կլինի իր հաշվին փոխհատուցել գազատարի կառուցման համար հատկացված միջոցները:

«Իսկ ո՞վ կվերադարձնի այդ միլիարդը: Այնպես որ, հենց սա էլ խոչընդոտում է, որպեսզի նրանք վերսկսեն լայնածավալ ռազմական գործողությունները Ղարաբաղի դեմ», - ասաց փորձագետը: Միևնույն ժամանակ, ըստ փորձագետի, Ադրբեջանի արտաքին քաղաքականությունն ընդհանուր առմամբ լուրջ անհաջողություն է ունեցել:

Արցախցիները արդար պայքար են մղում. Վալերի Բուայե



Արցախյան շարժման 30 տարին լավ առիթ է կրկին Արցախ այցելելու եւ տեղում այն տոնելու համար. հուսով եմ, շուտով կկարողանամ կրկին այցելել: Այս մասին ասել է Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր Վալերի Բուայեն՝ Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում փետրվարի 13-ին կայացած հանրահավաքի ժամանակ, տեսակապով շնորհավորելով Ղարաբաղյան շարժման 30-ամյակի կապակցությամբ, հաղորդում է «Արցախայեւր»:

«2011 թվականին էր, երբ առաջին անգամ այցելեցի Լեռնային Ղարաբաղ, եւ դա ինձ համար իսկական բացահայտում դարձավ: Առաջին հերթին եւ ծանոթացա մարդկանց, հնարավորություն ունեցա տեսնել հրաշալի բնապատկերներ, հին հուշարձաններ, ճանաչել պատմությունը, որ, ցավոք, մոռացության է մատնվել միջազգային հարթակներում: Կուզեմայի ասել, որ ձեզ հետ եմք, քանզի արդար պայքար եք մղում, մարդկային արժանապատվության պայքար: Այդ պատճառով է, որ Ֆրանսիայի ԱԺ-ում, Սենատում եւ այլ կառույցներում մենք պայքարում ենք, որ ձեզ ճանաչեն, որ ազատ ապրեք, ժողովրդավարական մի երկրում, որ ձեր երկիրը կարողանա զարգանալ», - ավելացրել է Վալերի Բուայեն:

Ընկերներս հարցնում են՝ ինչի վրա եմ ծախսելու շահած փողերը. Լապչինն Ադրբեջանի դեմ ՄԻԵԴ հայցի մասին



Բլոգեր Ալեքսանդր Լապչինը մեկնաբանել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ) Ադրբեջանի դեմ իր ներկայացրած հայցը:

«Ընկերներս հարցնում են՝ ինչի վրա եմ ծախսելու փողերը, եթե հաղթեմ Եվրոպայի դատարանում Ադրբեջանի դեմ հայցը: Նույնիսկ չեմ մտածել դեռ, եթե անկեղծ լինեմ: Նախ կհաղթեմ, ապա կխոսենք: Բայց եւ էլ պատասխան հարց ունեմ: Ենթադրենք՝ տեսականորեն, եւ Ադրբեջանից ստացա 50 հազար եվրո եւ դրանով Ստեփանակերտի կոնյակի գործարանից գնեցի 1000 շիշ լավ հնեցված ղարաբաղյան կոնյակ: Կնշանակի՞ դա, որ Ադրբեջանն իմ միջոցով ներդրում է կատարում Ղարաբաղի տնտեսությունում», - նշել է բլոգերը ֆեյսբուքյան իր էջում:

2016-ի վերջին Լապչինն Ադրբեջանի խնդրանքով Միմսկում ձերբակալվել էր: Ադրբեջանը նրան Արցախ այցելության համար իր սեւ ցուցակում էր ընդգրկել:

Բելառուսի գլխավոր դատախազությունը որոշել էր բավարարել Ադրբեջանի խնդրանքը եւ Լապչինին արտահանձնել: Բաքվում դատարանը Լապչինին դատապարտել էր երեք տարվա ազատազրկման:

Սեպտեմբերի 11-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հրամանագիր էր ստորագրել Ալեքսանդր Լապչինին ներում շնորհելու մասին: Միեւնույն ժամանակ պարզվել էր, որ Լապչինին բանտում գրեթե ինքնասպանության էին հասցրել: Հենց մահափորձն ու խոշտանգումներն էլ հիմք են դարձել Լապչինի կողմից ՄԻԵԴ հայց ներկայացնելու համար: Դեռ հայտնի չէ, երբ տեղի կունենա դատը:

Լեռնային Ղարաբաղի ամենատարեց բնակչուհին 110 տարեկան է (Փոտոռեպորտաժ)



Ղարաբաղյան հողը հռչակված է ոչ միայն սքանչելի բնությամբ, հնադարյան հուշարձաններով, բարերար հողով, այլ նաեւ երկարակյացներով: 2018 թվականի փետրվարի տվյալներով Լեռնային Ղարաբաղում 100 տարեկանն անց 16 մարդ է ապրում: Ամենատարեցը՝ 110-ամյա Արեւիատ Մարգարյանը, բնակվում է Թադավարդ գյուղում: Հենց նրան էլ հյուր գնացին NEWS.am-ի թղթակիցները (Փոտոռեպորտաժ):

Մեր այցելության պահին Արեւիատ տատիկը տանը չէր: Չծրագրած հյուրերին դիմավորեցին տնեցիները՝ հարսները եւ ծոռները: Ծուտով հայտնվեց նաեւ ինքը՝ այցելության «մեղավորը»: Մեւ գլխաշորով ու գոգնոցով փխրուն կին է: Դժվար կյանքի երկար տարիները իրենց հետքն են թողել, սակայն չեն փոխել լուսաշող, մանկականորեն ուրախ ժպիտը:



Արեւիատ տատիկի հետ գրուցելը հաճելի է, բայց հեշտ չէ: Ղարաբաղյան բարբառը, որն առանց այն էլ դժվար հասկանալի է, շռայլորեն համեմված է տեղական բառերով եւ արտահայտություններով: Փորձում եմ տատիկից նրբանկատորեն իր մասին հարցուփորձ անել, սակայն 10 րոպեից ընդմիջում եմ խնդրում եւ «թարգմանիչ»:

Հարսի՝ Ստելլայի միջոցով պարզվում է, որ Արեւիատ տատիկի 110 տարեկանը լրացել է հուլիսի 1-ին: Դարից երկար տեւած կյանքը դժվարին, ծանր, ձեռքբերումներով եւ կորուստներով լի է եղել: 17-ամյա Արեւիատն ամուսնացել է 5

երեխաների հայր այրի Ղազարի հետ: Պատանի Արեւիատն առաջնեկին է ունեցել, սակայն որոշ ժամանակ անց Ղազարը մահացել է: Արեւիատը չի թողել հարազատ դարձած օտար երեխաներին: Եվս մի քանի տարի հետո Արեւիատը երկրորդ անգամ է ամուսնացել: Եվ դարձյալ այրիի հետ, որը 6 երեխա ուներ: Չույզը 3 երեխա է ունեցել: Երկրորդ ամուսնու մահվանից հետո Արեւիատը մեծացրել է 15 երեխայի՝ իմ ու քոյի տարբերակում չդնելով: Արեւիատը երկար տարիներ հիվանդանոցում սանիտար է աշխատել: Ընդհանրապես վերապրած կյանքի մասին տատիկին հարցուփորձ անելը վերքերի փորփրում է: Այս կամ այն բանի մասին պատմելիս Արեւիատ տատիկը պարբերաբար կրկնում է՝ «չեմ ապրել, այլ տանջվել եմ», եւ աչքերն արտասուքով են լցվում: Արեւիատ տատիկը մի քանի երեխաներին վերապրել է: Հարցը, թե տատիկն, այնուամենայնիվ, քանի թոռ ու ծոռ ունի, անպատասխան մնաց: «Հարյուրից ավելի», - ամփոփեց Ստեղյան:

Եվ, այնուամենայնիվ, աչքերի խորամանկ փայլն ու ժպիտը մատնում են շրջապատի նկատմամբ աշխույժ հետաքրքրության մասին: «Միայն թե վատ եմ տեսնում եւ լսում», - բողոքում է տատիկը: Տատիկը նրբագեղ մատներով փոքրիկ ձեռքով վերցնում է սուրճի գավաթը: Պարզվեց՝ տատիկը սուրճ եւ լավ գինի է սիրում: «Իսկ ծխել փորձել եք», - կատակում ենք մենք: «Վայ, վայ», - զայրանում է Արեւիատ տատիկը:

Տնեցիների խոսքով՝ տատիկը սնունդի հարցում ընդհանրապես զուսպ է: Հիմնականում բանջարեղեն եւ կանաչեղեն է ուտում, միս չի սիրում, իսկ երշիկ եւ նրբերիշկ բերանը չի դնում: «Շատ միրգ կերեք, խնձոր եւ սալոր, չիր, առողջության համար օգտակար է», - խորհուրդ է տալիս Արեւիատ տատիկը: Վատթարացած տեսողությունը տատիկին թույլ չի տալիս մանր աշխատանք կատարել, գործել կամ կարել, սակայն ակտիվորեն իր ուժերի սահմաններում հնարավոր ամեն ինչ անում է տանը եւ այգում: Սիրում է մեկ-երկու բառ փոխանակել հարեւան ընկերուհիների հետ:

Արեւիատ տատիկը հյուրերին ճանապարհեց մուտքի սանդղահարթակին: Եվ մինչ մենք դեպի դարպասներն էինք գնում, կանգնած էր աստիճաններին, ժպտում էր եւ մեր հետքից ձեռքը թափահարում:

Ստեփանակերտ ճանապարհին մեզանից յուրաքանչյուրը մտքերի մեջ էր, որոնցով համակվել էր Արեւիատ տատիկի հետ հանդիպմամբ: Համաշխարհային առաջին պատերազմ, Համաշխարհային երկրորդ պատերազմ, մարդու կողմից Տիեզերքի նվաճում, Արեւիատ տատիկը եղել է մի ամբողջ դարի իրադարձությունների ականատեսը:

Արեւիատ տատիկ, առողջություն քեզ:

2017 թվականին Հայաստանի ավելի քան 25 հազար բնակիչ Ռուսաստանի քաղաքացիություն է ստացել

2017 թվականին Հայաստանի ավելի քան 25 հազար բնակիչ Ռուսաստանի քաղաքացիություն է ստացել: Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության տվյալներով՝ անցյալ տարի ՌԴ քաղաքացիություն էր ստացել ՀՀ 25.144 քաղաքացի:

Աղբյուրի համաձայն՝ 2016 թվականին ՌԴ քաղաքացիություն էր ստացել 22.264 հայ: Անցյալ տարի

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն է նախընտրել 10 394 ադրբեջանցի եւ 2 535 վրացի:

Կոնգրեսականները շնորհավորել են Արցախին Դարաբաղյան շարժման 30-ամյակի կապակցությամբ



ԱՄՆ Կոնգրեսի անդամները շնորհավորել են Արցախին Դարաբաղյան շարժման 30-ամյակի կապակցությամբ:

Ֆրենկ Փալոնեի խոսքով՝ նա միշտ տպավորված է եղել Արցախի ժողովրդով եւ նրանով, թե ինչպես նրանք արտահայտեցին իրենց բողոքը եւ հետ մղեցին Ադրբեջանի հարձակումը՝ ստեղծելով անկախ պետություն՝ ժողովրդավարությամբ եւ օրենքի գերակայությամբ:

Իր հերթին Դեվիդ Վալադառն նշել է, որ 30 տարի առաջ Արցախի ժողովուրդը սկսել էր մի շարժում, որը դարձավ խորհրդային պետության մեջ առաջին իսկապես ժողովրդավարական գործընթացը, որի արդյունքում միլիոնավոր մարդիկ ստացան երկար սպասված ազատությունը եւ մարդու իրավունքները:

Ջեկի Սփինյերը նաեւ նշել է, որ Դարաբաղի ժողովուրդը կիսում է ցանկացած մարդու ինքնիշխանության եւ ինքնորոշման ամենակարեւոր իրավունքի երազանքը: «Ամերիկյան պաշտպանում է նույն սկզբունքները», - ավելացրել է նա:

ՀՀ նախագահը ադրբեջանցի պատվիրակին հիշեցրեց, թե որքան կարճ է իր ժողովրդի պատմությունը եւ որքան երկար Երեւանին



Լեւոնային Դարաբաղի հակամարտությունը կարող է կարգավորվել միայն ու միայն այն պարագայում, եթե Ադրբեջանի ղեկավարությունը հրաժարվի իր անիրատեսական ակնկալիքներից:

«Արմենպրեսի» տեղեկացմամբ՝ այս մասին հայտարարել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը՝ փետրվարի 17-ին ելույթ ունենալով Մյունխենի անվտանգության համաժողովում: Ի պատասխան ադրբեջանցի պատվիրակի հարցին, որին, ի դեպ, ընդհատեց անգամ նիստը վարողը, քանի որ նրա

հարցը բավականին երկարեց ու նմանվեց քաղաքական ելույթի, ՀՀ Նախագահը պատասխանեց հանդուրժողականության ու քաղաքավարության սեփական օրինակով

«Մի հոռետորական հարց տամ. եթե ձեր երկրի նախագահը տարածքային հավակնություններ է արտահայտում Երեւանի նկատմամբ այս տարի, երբ հոկտեմբերին նշում ենք Երեւանի հիմնադրման 2800-ամյակը, ինչպես կարող է կարգավորվել ԼՂ հակամարտությունը: Դուք ցանկանում եք ապրել ազատ, ցանկանում եք ապրել Ղարաբաղում, ես ձեզ վստահեցնում եմ, որ ԼՂ ժողովուրդը եւս ցանկանում է ապրել ազատ, եւ նրանք ցանկանում են ապրել իրենց պատմական տարածքներում, որտեղ նրանց ժառանգությունն ունի հազարավոր տարիների պատմություն:

Նրանք չեն ցանկանում, որ դուք ավերեք այդ ժառանգությունը», -ասաց ՀՀ նախագահը:

Նրա խոսքով՝ թե ինչու են ԼՂ շուրջը գտնվող որոշ տարածքներ գտնվում Արցախի պաշտպանության ուժերի վերահսկողության տակ, բոլորը գիտեն պատճառները: Բացի դրանից, ԼՂ ժողովուրդը հանրաքվեի միջոցով Խորհրդային միության փլուզման ժամանակ արտահայտեց անկախ ապրելու իր ցանկությունը, իսկ Ադրբեջանի այն ժամանակվա իշխանությունները բռնաբերված փորձեցին խոչընդոտել ԼՂ ժողովուրդի միանգամայն լեգիտիմ եւ իրավական ցանկությունը: Ի դեպ, եվրոպական կառույցները ցուցաբերեցին շատ դրական վերաբերմունք՝ ընդունելով ԼՂ ինքնորոշման իրավունքը:

«Ես ատում եմ պատերազմը, բայց մեզ պաշտպանելու համար մենք պետք է ապահովվենք անվտանգության գոտի: Մենք պատրաստ ենք հակամարտության խաղաղ կարգավորման, եթե Ադրբեջանի ղեկավարությունը ցուցաբերի առողջ բանականություն եւ նստի բանակցությունների սեղանի շուրջ: Այս հարցը կարող է լուծվել միայն ու միայն փոխըմբռնման միջոցով», -ասաց նախագահ Սարգսյանը:

Նա մյունխենյան անվտանգության համաժողովի ընթացքում ի լուր աշխարհի եւ Ադրբեջանի իշխանությունների հայտարարեց, որ Երեւանն ունի 2800 տարվա պատմություն: «Հայ ժողովուրդն ապրում է իր պատմական հողում նվազագույնը 5000 տարի, ադրբեջանցիներն ու այլ ժողովուրդներ, որոնք Աստված գիտե, թե երբ են ինքնանույնականացվել, չեն կարող կոտրել հայ ժողովուրդի կամքը», -ընդգծեց ՀՀ նախագահը:

Ղարաբաղը պետք է ստորագրեր ոչ թե հրադադարի, այլ Ադրբեջանի կապիտուլյացիայի մասին համաձայնագիր. Նորատ Տեր-Գրիգորյանց

Ղարաբաղի ժողովուրդը ջանում էր ազատագրվել ագրեսիվ ազգայնական պետությունից՝ ի դեմս Ադրբեջանի եւ փնտրում էր ազատագրման ուղիներ: Այսպիսի կարծիք NEWS.am-ի հետ զրույցում հայտնել է Ղարաբաղյան պատերազմի մասնակից, հայկական բանակի հիմնադիրներից գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը՝ մեկնաբանելով փետրվարի 20-ին նշվող Ղարաբաղյան շարժման 30-ամյակը:

Արդյունքում, գեներալ-լեյտենանտի խոսքով, նրանք ընտրել են պայքարի ուղին եւ բազմաթիվ դժվարությունների հաղթահարման միջոցով հասել են իրենց բաղձալի նպատակին. «Նրանք ինքնորոշվել են միջազգային իրավունքի հիմքի վրա՝ Միացյալ ազգերի կազմակերպության կողմից սահմանված մի շարք հոդվածների հիման վրա», -շեշտել է Տեր-Գրիգորյանցը:



Դրա հետ մեկտեղ, նախկին զինվորականը նկատել է, որ երբ Հայաստանը հռչակել է իր անկախությունը, այն ժամանակվա իշխանություններն, իր համար անհասկանալի պատճառներով, Սահմանադրության մեջ չեն ընդգրկել Ղարաբաղը որպես հանրապետության անբաժանելի մաս ճանաչող դրույթ, ինչը հետագայում հանգեցրել է որոշակի դժվարությունների:

Գեներալ-լեյտենանտը նկատել է, որ չնայած Ղարաբաղյան պատերազմում ջախջախիչ պարտությանը, Բաքուն շարունակում է շուտափույթ հատուցման հույսեր փայփայել եւ չի հրաժարվել իր նախկին զավթիչ պլաններից, որի վկայությունն է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի վերջին հայտարարությունը:

Հարցին, թե ինչպիսին է եղել սփյուռքի դերը Ղարաբաղյան շարժման եւ պատերազմի գործում՝ նա պատասխանել է, որ ինքը եւս հանդիսանում է սփյուռքի ներկայացուցիչ եւ շատ բարձր է գնահատում հաջողության հարցում նրանց ներդրումը. «Սփյուռքն՝ ի դեմս հասարակական կազմակերպությունների եւ այլնի, իհարկե, մասնակցել է մեր ընդհանուր պայքարին: Նրանք շատ են մեզ օգնել, ինչպես Հայաստանին, այնպես էլ Ղարաբաղին, ընդ որում՝ բոլոր ուղղություններով՝ հումանիտար, ֆինանսական», - պարզաբանել է գեներալ-լեյտենանտը:

Խոսելով ներկա իրավիճակի մասին՝ Նորատ Տեր-Գրիգորյանցը ուշադրություն է դարձրել, որ այն փոխվել է, եւ եթե նախկինում պետք էր Ղարաբաղի համար պայքարել, ապա այժմ պայքարը շարունակվում է, բայց արդեն այլ ուղղությամբ: Այսպես, նրա խոսքով, հայկական կողմը մեծ ջանքեր է գործադրում ազատագրված տարածքների նկատմամբ վերահսկողությունը պահպանելու համար խաղաղ բնակչության անվտանգության ապահովելու նպատակով: Բացի այդ, հայկական կողմն ակտիվ աշխատանք է տանում Ղարաբաղի անկախության միջազգային ճանաչման ուղղությամբ:

Դրա հետ մեկտեղ, սովետական բանակի նախկին հրամանատարը խորը մտահոգություն է հայտնել, որ ռազմական գործողությունների ակտիվ փուլի ավարտին, երբ ավագ Ալիևը դիմել էր Երեւանին ռազմական գործողությունների դադարեցման խնդրանքով, հայկական

կողմը Բաքվի խնդրանքին պատասխանել է, բայց չի ներկայացրել Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման պահանջով վերջնագիր, որը գեներալ-լեյտենանտի կարծիքով՝ մեծ ռազմավարական սխալ էր, ինչի պատճառով Երևանը բաց է թողել այս հարցին վերջակետ դնելու հնարավորությունը. «Մենք կանգ առանք անժամանակ: Պետք էր նաև ազատագրել Մարտակերտը, Մարտունին, Շահումյանը, Շահումյանի շրջանը: Սակայն մենք ագրեսորներ չենք, այդ պատճառով էլ նրանց խնդրանքով կանգ առանք: Նույնիսկ ՄԱԿ-ի բանաձևի մեջ կար ռազմական գործողությունները դադարեցնելու պահանջ: Սակայն մենք «կարողացանք» ստորագրել հրադադարի մասին զգվելի եւ անշնորհք փաստաթուղթ, չնայած անհրաժեշտ էր ստորագրել ոչ միայն հրադադարի մասին, այլ նաև պահանջել Ադրբեջանի կապիտուլյացիան՝ առաջ բերելով Ղարաբաղի անկախության պահանջը», - նշեց նա:

Հայերը Ղարաբաղում ադրբեջանական գերեզմանները եւ հուշարձանները չեն ոչնչացրել. Ադրբեջանցի բլոգեր



Հայերը Ղարաբաղում ադրբեջանական գերեզմանները եւ հուշարձանները չեն ոչնչացրել: Եվրոպայում իր ելույթի ժամանակ այսպիսի հայտարարություն է արել քաղաքագետ, բլոգեր Օրդուհան Թեյմուրխանը, հաղորդում է haqqin.az-ը:

«Այո, խոզերն ու այծեր են քայլում ադրբեջանական գերեզմանների վրայով, սակայն հայերն ադրբեջանական հուշարձանների դեմ վանդալիստական գործողություններ չեն իրականացնել», - նշել է նա:

Հիշեցնենք, որ Ադրբեջանում մնացած բլոգերի հարազատների նկատմամբ կանոնավոր հետապնդումներ են իրականացվում իշխանությունների կողմից:

Բաքուն անպատժելի կերպով շարունակում է Սումգայիթյան ջարդերի քաղաքականությունը հայերի նկատմամբ. պատմաբան

Սումգայիթյան տեղի ունեցած իրադարձություններն Ադրբեջանում հայերի հետագա ջարդերի սկիզբ դարձան: Նման կարծիք «Սումգայիթյան ջարդերի 30-րդ տարեկիցը» թեմայով կրթ սեղանի ժամանակ հայտնեց Հայոց հարցի եւ Հայոց ցեղասպանության պատմության բաժնի ղեկավար, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Արմեն Մարությանը:

Նա հիշեցրեց, որ դեռ 1989 թվականին ջարդեր տեղի ունեցած Կիրովաբադում, ապա՝ Ադրբեջանի մայրաքաղաք

Բաքվում: «Իսկ այժմ մենք ակնատես ենք, թե ինչպես են Ադրբեջանի իշխանությունները սկսել հայ սպա Գուրգեն Մարգարյանի մարդասպան Ռամիլ Սաֆարովի հերոսացման գործընթացը», - ավելացրեց Մարությանը: Պատմաբանը նաև թվարկեց այն հանցագործություններն ու վայրագությունները, որոնք ադրբեջանցի զինծառայողների կողմից իրականացվեցին 2016 թվականին Թալիշում, երբ նրանք սպանեցին իրենց գյուղը լքել չհասցրած տարեցներին: Բացի այդ, նա հիշեցրեց, թե ինչպես են ադրբեջանցիները վարվել հայ ռազմագերիների հետ ապրիլյան պատերազմի ժամանակ՝ նրանց գործողությունները որակելով որպես դաժան եւ անմարդկային:



Արմեն Մարությանի կարծիքով՝ ադրբեջանական կողմի հանցագործություններն ամբողջովին համապատասխանում են ՄԱԿ-ի՝ ցեղասպան բնույթի հանցագործությունների իրականացման վերաբերյալ կոնվենցիային: Միևնույն ժամանակ, փորձագետը վրդովմունք հայտնեց առ այն, որ «հայկական կողմը՝ ի դեմս կառավարության եւ արտաքին գործերի նախարարության, բավարար ջանքեր չի գործադրում, որպեսզի Բաքուն պատասխանատվություն կրի նախկինում կատարած հանցագործությունների համար՝ ինչպես Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում եւ այլ հայաբնակ քաղաքներում, այնպես էլ ապրիլի դեպքերի ժամանակ»: Հայաստանի դիրքորոշումը, ըստ պատմաբանի, պասիվ եւ պարտվողական է:

Հիշեցնենք, որ 1988 թվականի փետրվարի 27-29-ին՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ից Հայկական ԽՍՀ-ին փոխանցելու միջնորդության որոշումից ընդամենը մի քանի օր անց, Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում տեղի ունեցան հայ բնակչության զանգվածային ջարդերը: Տեղական իշխանությունների եւ ոստիկանության անգործության պայմաններում ազգային պատկանելիության պատճառով զանգվածային սպանությունները, բռնաբարություններն ու ծաղրանքները դադարեցնել հաջողվել է միայն ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումների՝ քաղաք մուտք գործելուց հետո: Բազմաթիվ փորձագետների կարծիքով՝ կոտորածները հրահրվել էին Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիևի եւ իր գլխավորած Նախիջևանի կլանի կողմից, որոնց նպատակն էր վարկաբեկել հանրապետության ղեկավարությանը եւ նորից գլխավորել հանրապետությունը: Նմանատիպ իրավիճակ էր տիրում նաև 1990 թվականի հունվարի 13-ից 19-ը Բաքվում տեղի ունեցած հայերի էլ ավելի զանգվածային ջարդերի ժամանակ:

Խոջալուի ողբերգության ետևում Ադրբեջանն է կանգնած. Փախստականների համագումարի համակարգող



Խոջալուի իրադարձությունների ետևում ադրբեջանական կողմն է, ոչ թե հայկական: Այս մասին փետրվարի 26-ին՝ «Լրանում է Սումգայիթյան ջարդերի 30-րդ տարելիցը» թեմայով կյոթ-սեդան քննարկմանը հայտարարել է Ադրբեջանական ԽՍՀ-ից փախստականների համագումարի համակարգող Մարիամ Ավագյանը:

Նրա խոսքով՝ Խոջալուի իրադարձությունների համար մեղավոր է ադրբեջանական կողմը, որն այդ ողբերգության համար պայմաններ էր ստեղծել: «Դեռ այն ժամանակվա նախագահ Այազ Մուրադիբեկովը իր հարցազրույցում հայտարարել էր, որ Խոջալուի ողբերգության համար հայերը մեղավոր չեն: Նա նույնիսկ չի հերքել այն փաստը, որ Ադրբեջանի կողմում կռվել են մի շարք վարձկաններ, որոնց, նրա խոսքով, վերահսկել չէր ստացվում: Եվ երբ հայերը հումանիտար միջանցք էին բացել Խոջալուի խաղաղ բնակիչների համար, վերջիններս սկսել են շարժվել Ադդամի կողմը, որն այն ժամանակ գտնվում էր ադրբեջանական ուժերի հսկողության տակ: Ադրբեջանական ուժերը, նրանց տեսնելով, կրակ են բացել, նաեւ միանգամայն հնարավոր է, որ կրակն բացել են հենց վարձկանները», - պարզաբանել է Ավագյանը:

Միաժամանակ, նրա խոսքով, ողբերգությունից փորձում են օգտվել ադրբեջանական իշխանությունները՝ մեղադրելով հայկական կողմին եւ փորձելով հանցագործության իրենց պատասխանատվությունից խուսափել:

Ավագյանը նաեւ ընդգծել է, որ ռազմավարական տեսանկյունից Խոջալուն կարելի էր նշանակություն ունենալ ինչպես Ադրբեջանի, այնպես էլ հայկական կողմի համար, քանի որ այնտեղ կար օդանավակայան, որտեղից հնարավոր էր դեպի Ստեփանակերտ թռիչքներ կատարել, ինչպես նաեւ Ղարաբաղի հայկական այլ բնակավայրեր: Ուստի Խոջալուն վերցնելը հսկայական նշանակություն ուներ:

Սումգայիթում հայերի ջարդերը դարձան Ղարաբաղյան հակամարտության «Չեռնոբիլը». Թոմաս դե Վաալ

Սումգայիթում հայերի ջարդերը դարձան Ղարաբաղյան հակամարտության «Չեռնոբիլը»: Այսպիսի կարծիք է հայտնել բրիտանացի լրագրող եւ Կովկասի հարցերով փորձագետ Թոմաս դե Վաալը «Էխո Կավկաս»-ին տված հարցազրույցում:

«Բոլոր հայերն ու ադրբեջանցիները ներգրավված են հակամարտությունում, ոչ ոք արդեն չի կարող չեզոք դիրք գրավել: Իսկ Մոսկվան պատրաստ չէր հակամարտությանը,

(Միխայիլ) Գորբաչովը, կարծում եմ, պատկերացում չուներ ազգային հարցերի մասին, քիչ էր հասկանում ինչ է նշանակում դարաբաղյան հարց եւ այդ իրադարձությունները ցույց տվեցին հակամարտությունում միջնորդ լինելու Մոսկվայի անկարողությունը», - նշել է դե Վաալը:



Նրա խոսքով, անցած 30 տարիների ընթացքում հակամարտության լուծման լուրջ փորձեր են եղել: «Եվ ես կարծում եմ, որ դրան պատրաստ էր Լեւոն Տեր-Պետրոսյանը, որն ուներ այնպիսի ռազմավարական հաշվարկ, որ Հայաստանը չի զարգանա, քանի դեռ հակամարտությունը չի լուծվել: Ես կարծում եմ, որ Հեյդար Ալիևը նույնպես փաստացի պատրաստ էր հակամարտության կարգավորմանը: Բայց երկու հանգամանք կա՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը գրեթե անլուծելի է, քանի որ այդ տարածքների կարգավիճակի շուրջ կա երկու հակասող տարբերակ՝ կլինի այն Հայաստանի մաս թե՞ Ադրբեջանի մաս, ուստի այստեղ դժվար է գիշումային տարբերակ գտնել: Երկրորդ հարցն այն է, որ այստեղ ոչ միայն ղեկավարությունն է հարց լուծում, այլ նաեւ հասարակությունն իր կարծիքն ունի: Եվ ցանկացած ղեկավար, եթե ցանկանում է խնդիրն լուծում տալ, պետք է գործի շատ զգուշությամբ: 1998 թվականին Տեր-Պետրոսյանը որոշել էր գնալ բավականին համարձակ քայլի՝ ընդունելով հերթական խաղաղ կարգավորման պլանը եւ փաստացիորեն տապալկեց»:

Խոսելով ներկայիս իրավիճակի մասին՝ փորձագետը նշել է, որ հիմա վիճակն ավելի վատ է, քան այն ժամանակ, մաների հնարավորությունն ավելի քիչ է, իսկ ամենասուր եւ մեծ խնդիրն այն է, որ հայերը վերահսկում են ոչ միայն Լեռնային Ղարաբաղը: «Ես կարծում եմ, որ բոլորը քիչ թե շատ հասկանում են, որ ցանկացած որոշման պարագայում Լեռնային Ղարաբաղը կշարունակի մնալ հայերի վերահսկողության ներքո: Բայց այստեղ կա նաեւ Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների հարցը, որոնք չեն եղել Լեռնային Ղարաբաղի մաս՝ Ադրբեջանի շրջանները, որոնք նույնպես գտնվում են հայկական ուժերի վերահսկողության տակ: Իհարկե, Ադրբեջանը երբեք չի համակերպվի այդ տարածքների կորստի հետ, որոնց վրա ապրում էին կես միլիոն ադրբեջանցիներ, որոնք ներկայումս հանդիսանում են փախստականներ: Մյուս կողմից, հայկական կողմը դրանք ադրբեջանցիներին չի վերադարձնի, քանի դեռ չկան անվտանգության ամուր երաշխիքներ: Ես կարծում եմ 20 տարի առաջ ավելի հեշտ կլինեք այս հարցը լուծել, քան հիմա», - նշել է Վաալը:


Նրա խոսքով, ռազմական գործողությունների վերսկսման վտանգը միշտ առկա է. «Իհարկե, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները պատերազմ չեն ցանկանում:

Ո՛վ կգնա այդպիսի թխկի եւ նման վտանգավոր հակամարտություն կսկսի, որը կարող է հանգեցնել զանգվածային զոհերի եւ ավերածությունների: Բայց մյուս կողմից՝ կոնֆլիկտայնության մակարդակը շատ բարձր է՝ փոխադարձ սպառնալիքներ, բանավոր հայտարարություններ եւ շփման գծում ծանր սպառազինության զանգվածային կուտակում՝ հրետանի, ավիացիա»,- ասել է Դե Վալը՝ նշելով առկա վտանգները եւ հաշվի առնելով, որ առաջնագծում գտնվող հրամանատարները հրադադարի լուրջ խախտման դեպքում ստիպված կարող են արագ որոշում կայացնել եւ չհասցնել կապվել Բաքվի կամ Երեւանի հետ:

Նրա համոզմամբ՝ Կովկասում «հին» հակամարտություններն անկայունության կայուն բաղադրիչներ են արտաքին աշխարհի համար. «Նրանք, ովքեր ավելի ուշադիր են դրանց հետեւում, իհարկե տեսնում են նոր հակամարտության վտանգը, բազում խնդիրներ: Բայց Վաշինգթոնում, Բրյուսելում եւ այլ մայրաքաղաքներում կան այլ առաջնահերթություններ՝ Միքիա, Իրան, Հյուսիսային Կորեա եւ, իհարկե, Ուկրաինա, որոնք արեւմտյան քաղաքական գործիչների համար շատ ավելի սուր խնդիր են, քան Կովկասը»:

Նրա կարծիքով՝ վտանգ, իհարկե, կա, որովհետեւ Ղարաբաղյան հակամարտությունը սառեցված չէ, ռազմական գործողությունների վերսկսման վտանգը բավական լուրջ է: «Իմ կարծիքով՝ լավ կլիներ ավելի շատ ուշադրություն հատկացնել, ավելի շատ ջանքեր գործադրել այժմ, այլ ոչ որոշ ժամանակ անց, երբ հակամարտությունը կարող է անսպասելիորեն վերսկսվել»,- ասել է Դե Վալը:

Ռուսաստանում ստեղծվել է «Ռուսաստան-Արցախ բարեկամության միավորում»



Ռուսաստանում ստեղծվել է «Ռուսաստան-Արցախ բարեկամության միավորում» հասարակական կազմակերպությունը:

Կազմակերպությունը իր առջեւ նպատակ է դրել Ռուսաստանի եւ Արցախի ժողովուրդների միջեւ երկխոսության զարգացումը, որոնց ընդհանուր ճակատագիրը դարերի փորձությունների միջով է գրվել՝ հիմնվելով քաղաքականության արժեքների եւ պատմության ընդհանուր հաղթական էջերի վրա:

Գործունեության հիմնական ոլորտներն են՝ ռուս-արցախյան բազմակողմանի համագործակցության զարգացումն ու ժողովուրդների միջեւ դարավոր բարեկամության ամրապնդումը: Համոզված ենք, որ շատ բազմազ

ռուսական հասարակությանը հետաքրքիր ու օգտակար կլինի Արցախի հայերի բազմադարյա պատմության հետ ծանոթանալը, որի ավանդույթները ժառանգվել են նախնիներից եւ ժամանակակից նվաճումների հետ մեկտեղ պահպանվում են պետականաշինության եւ հանրային կյանքի ոլորտներում:

Ռուսաստանի Դաշնության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետություն) միջեւ հասարակական, մշակութային, գրական եւ ստեղծագործական հարաբերությունների ամրապնդման նպատակով ՀԿ-ն մտադիր է ակտիվորեն համագործակցել պետական եւ տարածաշրջանային իշխանությունների եւ հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ հայկական սփյուռքի՝ ինչպես Մոսկվայում, այնպես էլ Ռուսաստանի մարզերում գործող հասարակական կազմակերպությունների հետ:

Ղարաբաղը ինքրորոշման բացարձակ իրավունք ունի. ՄԱԿ փորձագետ



Ադրբեջանը պետք է հրաժարվի Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ իր ագրեսիվ դիրքորոշումից: Այս մասին Եվրախորհրդարանում կյոր սեղանի ժամանակ հայտարարել է ՄԱԿ անկախ փորձագետը:

ՄԱԿ ժողովրդավարական եւ արդար միջազգային կարգի աջակցության հարցերով անկախ փորձագետ Ալֆրեդ դե Սայասը փետրվարի 27-ին Բրյուսելում դարաբաղյան հակամարտությանը նվիրված կյոր սեղանի ժամանակ ելույթ է ունեցել:

«Ապրիլյան ագրեսիան խաղաղության եւ ՄԱԿ կանոնադրության խախտում էր, եւ այն պետք է դատապարտվի», - ասել է նա՝ հավելելով, որ Ղարաբաղն ինքնորոշման բացարձակ իրավունք ունի:

Ալֆրեդ դե Սայասը նշել է, որ ոչ ինքնորոշման իրավունքը, ոչ էլ տարածքային ամբողջականության իրավունքը բացարձակ չեն եւ պետք է օգտագործվեն որպես ՄԱԿ Կանոնադրության մի մաս:

Նա մի շարք եվրոպական երկրներ է թվարկել, որոնք միակողմանիորեն հռչակել են իրենց անկախությունը, շեշտելով, որ Ղարաբաղն ունի նույն իրավունքները: «Յուրաքանչյուր ոք ունի մարդու նույն իրավունքները: Ճանաչումը (Ղարաբաղը) մերժելու պատճառ չկա: Այս իրավունքը չի կարող կիրառվել ընտրովի », - ավելացրել է նա:

Կյոր սեղանը կազմակերպվել էր Բրյուսելում հայկական կազմակերպությունների եւ Եվրախորհրդարանի անդամներ Միշել Ռիվասիի եւ Լարս Ադաքտուստիի կողմից:

Ղարաբաղը վաստակել է իր ինքնիշխանությունը. ամերիկացի պրոֆեսոր



Հիմք ընդունելով բազմաթիվ նախադեպերը՝ Ղարաբաղի ժողովուրդն ինքնորոշման իրավունք ունի: Այս մասին փետրվարի 27-ին Բրյուսելում կազմակերպված դարաբաղյան հակամարտության թեմայով կլոր սեղանի ժամանակ հայտարարել է Վաշինգթոնի իրավունքի քոլեջի պրոֆեսոր Փոլ Ուիլյամսը:

Նրա խոսքով՝ Ղարաբաղը վաստակել է իր ինքնիշխանությունը եւ երկար տարիների ընթացքում արդյունավետ ինստիտուտներ է կառուցել, ներառյալ ազատ եւ արդար ընտրությունները:

Կլոր սեղանը կազմակերպվել էր Բրյուսելում հայկական կազմակերպությունների եւ Եվրախորհրդարանի անդամներ Միշել Ռիվասիի եւ Լարս Ադաքտուսոնի կողմից:

ԱԺ-ն ընդունեց Սումգայիթյան ոճրագործության 30-րդ տարելիցի կապակցությամբ ԱԺ հայտարարությունը



Ազգային ժողովն այսօր՝ փետրվարի 28-ին, միաձայն (72 կողմ ձայներով) ընդունեց Սումգայիթյան ոճրագործության 30-րդ տարելիցի կապակցությամբ ԱԺ հայտարարության նախագիծը:

Հիշեցնենք, որ հայտարարությանը միացել են ԱԺ բոլոր 4 խմբակցությունները:

Նշենք, որ այսօր Ադրբեջանական ԽՍՀ-ում հայերի դեմ կատարված բռնությունների գոհերի եւ տեղահանված անձանց հիշատակության օրն է:

Ստորեւ ներկայացնում ենք հայտարարության տեքստը.

«Արձանագրելով, որ 30 տարի առաջ Ադրբեջանի իշխանությունների կողմից ծրագրավորված ու կազմակերպված Սումգայիթյան ոճրագործությունը հայ ժողովրդին իր բնօրրանից դուրսնղման ու ոչնչացման ադրբեջանական հետեւողական քաղաքականության եւս մեկ դրսևւորում էր, որը սկիզբ է առել 1918թ.-ին Ադրբեջանի հիմնադրմամբ՝ հատկապես Բաքվում (1918թ.) 30.000 եւ Շուշիում (1920թ.) 20.000 հայերի կյանքեր խլած կոտորածներով, շարունակվել է խորհրդային

ժամանակաշրջանում բռնությունների միջոցով Նախիջևանի եւ այլ շրջանների բնակչության հայաթափմամբ եւ Արցախի հայության նկատմամբ բռնանշումներով, նոր թափ է ստացել, մասնավորապես, 1988-1991 թվականներին Սումգայիթում, Բաքվում ու Գանձակում (Կիրովաբադում) հայերի նկատմամբ իրականացված ջարդերով, 1991թ.-ից սկսած Արցախի դեմ սանձազերծված լայնածավալ ագրեսիայով, որում ներգրավված էին միջազգային ահաբեկչական կազմակերպությունների հետ սերտ առնչություն ունեցող հազարավոր վարձկաններ, 1991թ. իրականացված «Օղակ» ռազմական գործողության միջոցով 22 հայկական գյուղերի էթնիկ զտմամբ ու բռնագաղթով, 1992թ. Արցախի Մարաղա գյուղում ապրող տարեց մարդկանց, կանանց ու երեխաների սպանություններով, 1992թ. հայաբնակ Շահումյանի շրջանի եւ Մարտակերտի շրջանի մի հատվածի բռնագավթմամբ ու հայաթափմամբ, Ադդամի մոտակայքում՝ ադրբեջանական զինված խմբավորումների կողմից Խոջալու ավանի բնակիչների սպանությամբ՝ Ադրբեջանում ներքաղաքական պայքարում դա օգտագործելու եւ հայերին վերագրելու նպատակով, հայ ժողովրդի ներկայացուցիչների նկատմամբ հանցագործություններ իրականացրած անձանց հերոսացմամբ, հակահայկական ատելության ու անհանդուրժողականության սերմանմամբ, հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացմամբ, պատմության կեղծարարությամբ, 1994-1995թթ. կնքված զինադադարի եռակողմ անժամկետ համաձայնագրերի խախտումներով եւ դիվերսիոն ներթափանցումներով, խաղաղ բնակչության ու զինվորականների սպանություններով, քաղաքացիական հաստատությունների դեմ թիրախավորված ռմբակոծումներով, 2016թ.-ի ապրիլին Արցախի դեմ նոր լայնածավալ ագրեսիայի սանձազերծումով, որն ուղեկցվեց միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումներով՝ երեխաների, կանանց ու տարեցների սպանություններով, զոհված զինծառայողների մարմինների խոշտանգմամբ, գերության մեջ հայտնված հայ զինվորների՝ ահաբեկչական խմբավորումներին բնորոշ ոճով գլխատումներով:

Փաստելով, որ էթնիկ զտման, հայաթափման եւ ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի ներքո հայտնված արցախահայության՝ 1988թ. փետրվարին, միջազգային իրավունքի նորմերին եւ գործող օրենսդրության համաձայն, խաղաղ ցույցերի միջոցով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկի՝ ժողովուրդների իրահավասարության եւ ինքնորոշման իրավունքի կիրառման պահանջին ի պատասխան Ադրբեջանի իշխանությունների ձեռնարկված եւ ծայրահեղ հայատյացության պետական քարոզչությամբ ուղեկցվող հակահայկական բռնությունները, ջարդերն ու տեղահանումները, անհնարին էին դարձրել Ադրբեջանում հայերի գոյությունը:

Արձանագրելով, որ Ադրբեջանի իշխանությունները, հակադրվելով միջազգային հանրությանն ու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներին, խաթարում են Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հանգուցալուծման բանակցային գործընթացը՝ շարունակելով ապավինել ուժի եւ ուժի սպառնալիքի կիրառմանը:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը

դատապարտում է խաղաղ բնակչության դեմ Ադրբեջանի իրագործած զանգվածային բռնությունները, սպանություններն ու տեղահանումները, ինչպես նաև հայատյաց, ռասիստական քաղաքականությունը եւ Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ագրեսիվ ռազմական գործողությունները:

Կոչ է անում խորհրդարաններին եւ խորհրդարանական վեհաժողովներին, միջազգային կազմակերպություններին, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներին՝ դատապարտել խաղաղ բնակչության նկատմամբ Ադրբեջանի իրականացրած եւ շարունակվող ռմբակոծությունները, միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները, որոնք սպառնալիք են ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ տարածաշրջանի անվտանգության, կայունության եւ զարգացման համար»:

Ստեփանակերտում հարգել են Սումգայիթի զոհերի հիշատակը



Սումգայիթի ջարդերի 30-րդ տարելիցի կապակցությամբ Նախագահ Բակո Սահակյանը փետրվարի 28-ին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Սարտիրոսյանի եւ հանրապետության բարձրաստիճան դեկավարության ուղեկցությամբ այցելել է Ստեփանակերտի հուշահամալիր:

Նա ծաղիկներ է դրել անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Արմեն Սարգսյանն ընտրվեց ՀՀ նախագահ



Հայաստանի Ազգային ժողովում կազմակերպված քվեարկության արդյունքում ՀՀ 4-րդ նախագահ ընտրվեց Արմեն Սարգսյանը:

Այսօր՝ մարտի 2-ին, ԱԺ հաշվիչ հանձնաժողովի նախագահ Գագիկ Մելիքյանը հայտարարեց, որ փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել է 105 պատգամավորներից 101-ը. ընտրության արդյունքներով Արմեն Սարգսյանը ստացել է

90 կողմ, 10 դեմ ձայն, եւս մեկ քվեաթերթիկ անվավեր է ճանաչվել:

Նշենք, որ նախապես ԱԺ 4 խմբակցություններից 3-ը՝ ՀՀԿ, ՀՅԴ եւ «Ծառուկյան», հայտարարել էին, որ կողմ են քվեարկելու Արմեն Սարգսյանին: «Ելք» խմբակցությունը, որն ունի 9 պատգամավոր, հայտարարել էր, որ դեմ են քվեարկելու: Հատկանշական է, որ քվեարկությանը մասնակցել են «Ելք» խմբակցության 7 պատգամավորներ, մինչդեռ Արմեն Սարգսյանին դեմ քվեարկողների թիվը 10 է:

Հիշեցնենք, որ Արմեն Սարգսյանը միակ թեկնածուն էր, որին առաջադրել էր իշխող կոալիցիան՝ ՀՀԿ-ն եւ ՀՅԴ-ն: ՀՀ նախագահի թեկնածու առաջադրելու համար անհրաժեշտ էր ԱԺ պատգամավորների 1/4-ի ստորագրությունը: «Ծառուկյան» խմբակցությունը ցանկություն չէր հայտնել թեկնածու առաջադրել, իսկ «Ելք»-ը չունեւ բավարար թվով պատգամավորներ՝ թեկնածու առաջադրելու համար:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում, Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ երկրի նախագահն ընտրվում է ոչ թե համաժողովրդական ընտրություններով, այլ Ազգային ժողովի կողմից: Քանի որ Հայաստանն անցել է խորհրդարանական կառավարման համակարգի, հետեւաբար երկրի թիվ մեկ պաշտոնյան լինելու է վարչապետը, իսկ նախագահի լիազորություններն էապես կրճատել են:

Նշենք, որ թեւեւ Արմեն Սարգսյանն ընտրվել է ՀՀ նախագահի պաշտոնում, սակայն իր լիազորությունները կստանան զործող նախագահի լիազորությունների ավարտին՝ ապրիլի 9-ին, ԱԺ հատուկ նիստում:

Արեւմտյան Հայաստան

Դիարբեքիւրում թոնրատուն է բացվել «Արարատ-թոնիր-լավաշ» անունով



Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ Դիարբեքիւրում սասունահայի կողմից լավաշի փուռ է բացվել:

Ինչպես Դիարբեքիւրից տեղեկացնում է Akunq.net-ի թղթակիցը, փուռը բացած այդ սասունահայր՝ Էրիհան Յամանը, գրույցում հայտնեց, որ երկար տարիներ ապրել է Մուշում, որտեղ բազմաթիվ լավաշի փուռ էին առկա, բայց քանի որ Տիգրանակերտում չկային, անհրաժեշտ է համարել այստեղ նման թոնրատուն բացել: Այս փուռը բացել կարողանալու համար նա գնացել է Հայաստան և հարցուփորձ արել, թե ինչպես կարելի է փռի համար անհրաժեշտ սարքավորումներ գտնել, ապա՝ դրանց մի մասը

տեղադրել է Հայաստանից Դիարբեքի Եկաժ վարպետների կողմից: Երբ փուռը պատրաստ է եղել, նա, դարձյալ Հայաստանից, 3 վարպետ է տեղափոխել այստեղ, ովքեր նրան ու իր եղբայրներին սովորեցրել են՝ ինչպես լավաշ թխել:

Հայաստանից այստեղ ժամանած վարպետներ Արաքս Մարտիրոսյանը, Արթուր Ադեկյանը եւ վերջինիս կինը՝ տիկին Հասմիկը, մեզ հետ զրույցում նշեցին, որ իրենք երջանիկ են մայր հայրենիքում գտնվելու կապակցությամբ և հպարտ՝ Տիգրանակերտում առաջին անգամ լավաշի փուռ բացելու գործում իրենց ունեցած ներդրման համար: Տիկին Հասմիկը հայտնեց, թե իրենց համար մեծ պատիվ է հայկական լավաշը Դիարբեքիում կրկին տարածելը: Նա նաև հաղորդեց, որ իրենք ունեն 5 զավակներ, որոնց թողել են Երևանում:

2018 թ. հունվարի 20-ին «Արարատ-թոնիր-լավաշ» թոնրատունը հանդիսավոր կերպով բացվեց՝ Տիգրանակերտում ապրող հայերի, մեծամասամբ՝ այստեղի սասունահայերի մասնակցությամբ: Թոնրատան բացմանը մասնակից հյուրերին փոփ տեր Էրիան Յամանը հյուրասիրեց թոնրում փխված լավաշ և չիդ քոֆթե (կոտլետի տեսակ, որը պատրաստվում է բլրուրով-Ակունքի խմբ.): Բացման մասնակիցները զրույցում ընդգծեցին, որ շատ են հավանել նոր թխված լավաշը, գնելու են դրանից և իրենց տուն տանելու:

Ստամբուլի նահանգապետարանը հայտարարել է, թե չի ճանաչում արք. Բեքյանին որպես պատրիարքի տեղապահ



Ստամբուլի նահանգապետարանը սկանդալային բովանդակությամբ նամակ է ուղարկել Պոլսո հայոց պատրիարքարան:

Ինչպես տեղեկանում ենք Ստամբուլի հայկական «Ակոս»-ից, Ստամբուլի նահանգապետարանի ուղարկած նամակում նշվել է, թե Հայոց պատրիարք Մեսրոպ Մուրաֆյանը դեռ ողջ է, եւ նոր պատրիարք ընտրելու համար անհրաժեշտություն դեռ չկա:

Նամակում շեշտվել է, թե իրենք որպես փոխպատրիարք են ճանաչում արք. Արամ Աթեշյանին, եւ արք. Բեքյանի ընտրության հետ կապված բոլոր գործընթացներն ու Բեքյանի բոլոր որոշումներն անօրինական են համարում:

Նշենք, որ Պոլսո հայոց պատրիարք, արք. Մեսրոպ Մուրաֆյանը գտնվում է անկողնային վիճակում եւ ֆիզիկապես արդեն 10 տարի չի կարողանում իրականացնել իր պարտականությունները: Ավելի ուշ, երբ հայ համայնքը որոշում է նոր պատրիարքի ընտրություններ անցկացնել, թուրքական կառավարությունը փոխպատրիարք է

նշանակում արք. Արամ Աթեշյանին: Նման պաշտոն չկա հայ եկեղեցում:

Հայ համայնքին սա չի բավարարում, քանի որ արք. Աթեշյանը նշանակված անձ լինելով՝ կաշկանդված է հայ համայնքին լիարժեք ծառայելու մեջ եւ իշխանամետ պահվածքով է մշտապես հանդես եկել:

Այս պայմաններում 2016-ին Ստամբուլի հայ համայնքի ճնշման տակ արք. Արամ Աթեշյանը հրաժարական է տալիս եւ պատրիարքական տեղապահի ընտրություն է անցկացվում: Արդյունքում պատրիարքական տեղապահ է ընտրվում արք. Գարեգին Բեքյանը: Այնուհետ սկսվում է նոր պատրիարքի ընտրության գործընթաց, որի շրջանակներում ստեղծված պատրիարքի նախաձեռնող խումբը մի քանի անգամ դիմել է Ստամբուլի նահանգապետարանին եւ ՆԳՆ-ին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել:

Ավելի ուշ պարզվել է, որ Ստամբուլի նահանգապետարանը փետրվարի 7-ին քննարկման է հրավիրել հայ համայնքի հիմնադրամների ներկայացուցիչներին ու նախաձեռնող խմբի խոսնակին: հանդիպմանը ներկա է լինելու նաեւ ՆԳ նախարարը:

Ստամբուլի հայ համայնքի ներկայացուցիչները հրավիրվել են ՆԳ նախարարի հետ հանդիպման

Ստամբուլի հայ համայնքի հիմնադրամների նախագահները օրակարգային խնդիրների քննարկման համար հրավիրվել են Ստամբուլի նահանգապետարան:

Ինչպես տեղեկանում ենք Ստամբուլի հայկական «Ակոս»-ից, փետրվարի 7-ին, Ստամբուլի նահանգապետարանում տեղի ունենալիք քննարկմանը մասնակցելու է նաեւ երկրի ՆԳ նախարար Սուլեյման Սոյլուն:

Ենթադրվում է, որ հանդիպման ժամանակ քննարկվելու է պատրիարքի ընտրությունների հետ կապված հարցերը, քանի որ հանդիպմանը հրավիրվել է նաեւ պատրիարքական ընտրությունների նախաձեռնող խմբի խոսնակ, իրավաբան Սեպուհ Ասլանգիլը:

Պոլսո հայոց պատրիարքի ընտրության նախաձեռնող խումբը դատի է տվել Թուրքիայի ՆԳՆ-ին



Պոլսո հայոց պատրիարքի ընտրության կազմակերպման նպատակով ստեղծված նախաձեռնող խումբը դատական հայց է ներկայացրել Թուրքիայի ներքին գործերի նախարարության դեմ:

Ինչպես տեղեկանում ենք Ստամբուլի հայկական «Ակոս»-ից, Պոլսո հայոց պատրիարքի ընտրության նախաձեռնող խումբը պատրիարքի ընտրության անցկացման հետ կապված ավելի վաղ դիմում էր ներկայացրել Ստամբուլի նահանգապետարանի եւ ՆԳՆ, սակայն որեւէ պատասխան չէր ստացել: Այս իրավիճակում իրավունքները չկորցնելու համար նախաձեռնող խումբը որոշում է կայացրել դատական հայց ներկայացրել ՆԳՆ-ի դեմ:

Այս որոշումը միանշանակ չի ընդունվել նախաձեռնող խմբի ներսում, որից հետո 4 անդամ հրաժարական են տվել:

Նշենք, որ այս դեպքից հետո Ստամբուլի հայ համայնքի հիմնադրամների նախագահները եւ նախաձեռնող խմբի խոսնակը հրավիրվել են Ստամբուլի նահանգապետարան, որտեղ հանդիպմանը ներկա է լինելու նաեւ ՆԳ նախարար Սուլեյման Սոյլուն:

Փայլանը դատապարտել է արք. Բեքչյանին պատրիարքի տեղապահ չճանաչելու Ստամբուլի նահանգապետի հայտարարությունը



Թուրքիայի խորհրդարանի հայ պատգամավոր Կարո Փայլանն անդրադարձել է Պոլսո հայոց պատրիարքի տեղապահ Գարեգին Բեքչյանին չճանաչելու մասին Ստամբուլի նահանգապետի հայտարարությանը:

Կարո Փայլանը Twitter-ի իր էջում գրել է, որ երկար տարիներ պատրիարք ընտրել չկարողացող հայ համայնքը ընտրել է պատրիարքի տեղապահ եւ ընտրության կազմակերպող նախաձեռնող խումբ: «Սակայն Ստամբուլի նահանգապետի հայտարարությունը նման է պատրիարքարանում հարկադիր կատարողի նշանակման: Սա բաց հարված է»,-գրել է Կարո Փայլանը:

Նշենք, որ Ստամբուլի նահանգապետը նամակ էր ուղարկել պատրիարքարան, որում շեշտվել է, թե իրենք որպես փոխպատրիարք են ճանաչում արք. Արամ Աթեշյանին, եւ արք. Բեքչյանի ընտրության հետ կապված բոլոր գործընթացներն ու Բեքչյանի բոլոր որոշումներն անօրինական են համարում:

Արք. Արամ Աթեշյանը կրկին Պոլսո հայոց փոխպատրիարք է. Բեքչյանը հայտնել է հրաժարականի մասին



Պոլսահայ համայնքում պատրիարքի ընտրությունները նոր անցանկալի զարգացումներ են գրանցել հայ համայնքի ներկայացուցիչների եւ թուրքական իշխանությունների հետ կայացած հանդիպման արդյունքում:

Պոլսո հայոց պատրիարքարանը հայտարարություն է տարածել, որ հաշվի առնելով Ստամբուլի նահանգապետարանի նամակը, որում շեշտվել է, թե պետությունը փոխպատրիարք է շարունակում ճանաչել արք. Արամ Աթեշյանին եւ անօրինական համար արք. Բեքչյանի ընտրություններն ու նրա կայացրած որոշումները, շեշտել է, տեղի ունեցել Կրոնական ժողովի նիստ:

Նիստում որոշում է կայացվել հետ վերադառնալ 2010 թվականի իրավիճակին, երբ իշխանությունների կողմից փոխպատրիարք է նշանակվել արք. Արամ Աթեշյանը, այսինքն, Պոլսո հայոց փոխպատրիարքի պարտականությունները շարունակելու է կատարել արք. Արամ Աթեշյանը:

Նվում է, որ նախորդ տարի պատրիարքի տեղապահ ընտրված արք. Բեքչյանը չի մասնակցել ժողովին՝ բանավոր հայտնելով իր հրաժարականի մասին:

Նենք, որ Պոլսո հայոց պատրիարք, արք. Մեսրոպ Մուրթաֆյանը գտնվում է անկողնային վիճակում եւ ֆիզիկապես արդեն 10 տարի չի կարողանում իրականացնել իր պարտականությունները: Ավելի ուշ, երբ հայ համայնքը որոշում է նոր պատրիարքի ընտրություններ անցկացնել, թուրքական կառավարությունը փոխպատրիարք է նշանակում արք. Արամ Աթեշյանին: Նման պաշտոն չկա հայ եկեղեցում:

Հայ համայնքին սա չի բավարարում, քանի որ արք. Աթեշյանը նշանակված անձ լինելով՝ կաշկանդված է հայ համայնքին լիարժեք ծառայելու մեջ եւ իշխանամետ պահվածքով է մշտապես հանդես եկել:

Այս պայմաններում 2016-ին Ստամբուլի հայ համայնքի ճնշման տակ արք. Արամ Աթեշյանը հրաժարական է տալիս եւ պատրիարքական տեղապահի ընտրություն է անցկացվում: Արդյունքում պատրիարքական տեղապահ է ընտրվում արք. Գարեգին Բեքչյանը: Այնուհետ սկսվում է նոր պատրիարքի ընտրության գործընթաց, որի շրջանակներում ստեղծված պատրիարքի նախաձեռնող խումբը մի քանի անգամ դիմել է Ստամբուլի նահանգապետարանին եւ ՆԳՆ-ին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել:

Իսկ փետրվարի 5-ին Ստամբուլի նահանգապետարանի ուղարկած նամակում նշվել է, թե Հայոց պատրիարք Մեսրոպ Մուրթաֆյանը դեռ ողջ է, եւ նոր պատրիարք ընտրելու համար անհրաժեշտություն դեռ չկա եւ շեշտվել, որ չեն ճանաչում արք. Բեքչյանին ու նրա որոշումները օրինական չեն ընդունում:

Այնուհետ փետրվարի 7-ին հայ համայնքի ներկայացուցիչները հանդիպում են Թուրքիայի ՆԳ նախարարի, Ստամբուլի նահանգապետի, Ստամբուլի ոստիկանապետի, Ստամբուլի ժանդարմերիայի հրամանատարի եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հանդիպումը փաստացի անօգուտ է եղել հայ համայնքի համար, քանի որ 2 օր անց արք. Արամ Աթեշյանը կրկին դարձավ փոխպատրիարք: ՆԳ նախարարը հայտնել է, որ հայ համայնքի հետ հաջորդ հանդիպումը տեղի է ունենալու մեկ ամսից, երբ ինքը հայերի պահանջների մասին կհայտնի նախագահին ու վարչապետին:

Ինչո՞ւ այդքան արկածներից հետո կրկին Պոլստ հայոց փոխպատրիարք դարձավ արք. Աթեշյանը

Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական պաշտոններից մեկը՝ Պոլստ հայոց պատրիարքությունը շարունակում է մնալ թե՛ պոլսասիայ, թե՛ աշխարհի հայության ուշադրության կենտրոնում պատրիարքի անգործունակության հետեւանքով ստեղծված իրավիճակի պատճառով:

Ամեն ինչ սկսվեց տարիներ առաջ՝ 2008 թվականից, երբ Պոլստ հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանը առողջական խնդիրներ ունեցավ եւ չկարողացավ կատարել հոգևոր առաջնորդի պարտականությունները: Բայց քանի որ Պոլստ հայոց պատրիարքարանի կանոնադրությամբ պատրիարքը ընտրվել է ցմահ, նոր պատրիարք ընտրելու հնարավորությունը բավականին դժվար կացության մեջ է դրել ստամբուլահայ համայնքին:

Այդ իրավիճակում պետությունը իրերի դրությունն ի նպաստ թուրքական պետության շրջելու համար հայոց եկեղեցում գոյություն չունեցող պաշտոնի է նշանակում այդ ժամանակ Կրոնական խորհրդի առաջնորդ արք. Արամ Աթեշյանին: Այսինքն, իշխանությունները փոխպատրիարք են նշանակում արք. Արամ Աթեշյանին:

Այս դրությունն, իհարկե, դուր չեկավ Ստամբուլի հայ համայնքի առաջադեմ հատվածին: Իսկ արդեն արք. Արամ Աթեշյանի կաշկանդված քաղաքականությունը դրդեց հայ համայնքի ակտիվ ներկայացուցիչներին ու որոշ հոգևորականներին՝ դեմ դուրս գալ ստեղծված իրավիճակի դեմ եւ պատրիարքին անգործունակ ճանաչել եւ պատրաստվել նոր ընտրությունների:

Այս համատեքստում արդեն գործնական քայլեր ձեռնարկվեցին 2017-ի սկզբին, իսկ արդեն մարտի 15-ին Պոլստ հայոց պատրիարքի տեղապահ է ընտրվում Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ արք. Գարեգին Բեքյանը: Սակայն արք. Աթեշյանը անմիջապես հայտարարում է, թե այդ ընտրությունները թուրքական իշխանությունները չեն ընդունում եւ ինչ-որ գրություն է ցույց տալիս պատվիրակներին: Արք. Աթեշյանը երկար դիմադրում է հրաժարական տալ, սակայն Էջմիածնում Վեհափառի հետ հանդիպումից հետո որոշ ժամանակ անց հայտնում է իր հրաժարականի մասին:

Այս ընթացքում Պոլստ հայոց պատրիարքարանում համայնքի ակտիվ մասնակիցների կողմից ստեղծվում է պատրիարքի ընտրության նախաձեռնող խումբ, որը սկսում է պատրիարքի ընտրության հետ կապված առաջին քայլերն անել: Նախ գրություններ են ուղարկվում Ստամբուլի նահանգապետարան եւ Թուրքիայի ՆԳ նախարարություն, որում նշվում է, որ պատրիարքը անգործունակ է ճանաչվել եւ նոր ընտրություններ են անցկացվելու: Ընտրությունները նախատեսում էին իրականացնել դեմ 2017-ի դեկտեմբերին, սակայն թուրքական իշխանությունների կողմից պատասխան չի ստացվում, ուստի ընտրությունների անցկացումը հետաձգվում է անորոշ ժամանակով: Ավելին, նախաձեռնող խումբը արդեն դատական հայց է ներկայացրել ՆԳ նախարարության դեմ:

Իրերի նման զարգացումներում Ստամբուլի նահանգապետարանը արդեն 2018-ի փետրվարի 5-ին նամակ է գրում Պոլստ հայոց պատրիարքարան՝ շեշտելով, որ

իրենք որպես փոխպատրիարք ճանաչում են արք. Արամ Աթեշյանին եւ չեն ընդունում արք. Բեքյանին որպես պատրիարքի տեղապահ եւ նրա որոշումները անօրինական են համարում:

Իսկ արդեն փետրվարի 7-ին Ստամբուլի նահանգապետարան հրավիրված հայ համայնքի ազդեցիկ ներկայացուցիչների հետ հանդիպմանը Թուրքիայի ՆԳ նախարար Սուլեյման կրկին շեշտեց, որ պետությունը արք. Արամ Աթեշյանին է նշանակել փոխպատրիարք, քանի որ հայոց պատրիարքը դեռ ողջ է եւ նոր ընտրություններ չեն կարող լինել:

Սակայն հանդիպման վերջում ՆԳ նախարարը խոստացել է հայերի պահանջները նոր ընտրությունների անցկացման հետ կապված փոխանցել նախագահին եւ վարչապետին եւ մեկ ամիս անց կրկին հանդիպել նույն կազմով:

Եւ արդեն այս հանդիպումից էլ 2 օր անց Պոլստ հայոց պատրիարքարանում արտահերթ ժողով է տեղի ունենում, որի ժամանակ կրոնական խորհուրդը հայտնում է, որ ստեղծված իրավիճակում արք. Աթեշյանը կրկին շարունակելու է կատարել իր պարտականությունները: Մի հետաքրքիր փաստ, որ արտահերթ համաժողովից հետո տարածված հայտարարության մեջ նշվել է, որ արք. Բեքյանը չի մասնակցել, սակայն բանավոր հայտնել է իր հրաժարականի մասին:

Շատերի մոտ բնական հարց է ծագել՝ ինչո՞ւ եղավ այսպես: Օսմանյան կայսրության օրոք Հայոց պատրիարքարանը մեծ իրավունքներ է ունեցել: Նույնիսկ անվանել են պետություն պետության ներսում, սակայն Թուրքիայի հանրապետության կազմում մի քանի անգամ լուրջ խնդիրներ են առաջացրել իշխանությունների պատրիարքների ընտրության հետ կապված:

Նախ, պետք է հաշվի առնել, որ զարգացումները տեղի են ունենում Էրդոհանի իշխանության օրոք: Թուրքական իշխանությունները վերջին տարիներին ազգային փոքրամասնությունների հարցերով բավականին հետընթաց են գրանցել: Իսկ հեղաշրջման փորձից հետո Թուրքիայում ստեղծված իրավիճակը ոչ միայն ազգային փոքրամասնությունների, այլ նաեւ հազարավոր թուրքերի համար մեծ խնդիրներ է ստեղծել:

Այս պայմաններում թուրքական իշխանությունը պարզապես թույլ չէր տա մի ամբողջ հայ համայնքի հոգևոր կառույցը դուրս գա իր վերահսկողությունից եւ անցնի Գերմանիայից եկած եւ ընտրված հոգևորականի ձեռքը:

Եւ պետք է շեշտել նաեւ արք. Արամ Աթեշյանի բավականին ինքնավստահ պահվածքը վերջին շրջանում: Նա կարծես իշխանություններից ուներ երաշխիքներ, որ իրեն աջակցելու են ու ինքը կրկին վերանշանակվելու է:

Անդրանիկ Բապիրյան

Կեղտոտ խաղերն ու ինտրիգները մեծ չափերի հասան. արք. Բեքյանը հրաժեշտի նամակ է գրել

Պոլստ հայոց փոխպատրիարքի պաշտոնում թուրքական պետության աջակցությամբ արք. Արամ Աթեշյանի վերանշանակումից հետո ընտրված տեղապահ արք. Գարեգին Բեքյանը Ստամբուլից հեռանալուց առաջ հրաժեշտի հայտարարություն է արել:

Ինչպես տեղեկանում ենք Ստամբուլի հայկական «Ակոս»-ից, արք. Բեքյանը նշել է, որ վերջին զարգացումները մեկ օրում

տեղի չեն ունեցել: «Ցավոք, ինձ թիրախավորած վերջին դեպքերի միակ նպատակը 85-րդ պատրիարքի ընտրությունները չեղարկելն էր: Տեղի ունեցածը երկար ու նախագծված աշխատանքի հետևանք էր, քանի որ կեղտոտ խաղերն ու ինտրիգները մեծ չափերի հասան», գրել է արք. Բեքյանը:

Նշենք, որ Պոլսո հայոց պատրիարք, արք. Մեսրոպ Մուրաֆյանը գտնվում է անկողնային վիճակում եւ ֆիզիկապես արդեն 10 տարի չի կարողանում իրականացնել իր պարտականությունները: Ավելի ուշ, երբ հայ համայնքը որոշում է նոր պատրիարքի ընտրություններ անցկացնել, թուրքական կառավարությունը փոխպատրիարք է նշանակում արք. Արամ Աթեշյանին: Նման պաշտոն չկա հայ եկեղեցում:

Հայ համայնքին սա չի բավարարում, քանի որ արք. Աթեշյանը նշանակված անձ լինելով՝ կաշկանդված է հայ համայնքին լիարժեք ծառայելու մեջ եւ իշխանամետ պահվածքով է մշտապես հանդես եկել:

Այս պայմաններում 2016-ին Ստամբուլի հայ համայնքի ճնշման տակ արք. Արամ Աթեշյանը հրաժարական է տալիս եւ պատրիարքական տեղապահի ընտրություն է անցկացվում: Արդյունքում պատրիարքական տեղապահ է ընտրվում արք. Գարեգին Բեքյանը: Այնուհետ սկսվում է նոր պատրիարքի ընտրության գործընթաց, որի շրջանակներում ստեղծված պատրիարքի նախաձեռնող խումբը մի քանի անգամ դիմել է Ստամբուլի նահանգապետարանին եւ ՆԳՆ-ին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել:

Ավելի ուշ պարզվել է, որ Ստամբուլի նահանգապետարանը փետրվարի 7-ին քննարկման է հրավիրել հայ համայնքի հիմնադրամների ներկայացուցիչներին ու նախաձեռնող խմբի խոսնակին: հանդիպմանը ներկա է լինելու նաեւ ՆԳ նախարարը: Վերջինս եւս պնդել է, որ արք. Բեքյանին չեն ճանաչում որպես տեղապահ եւ միակ օրինական փոխպատրիարքը արք. Արամ Աթեշյանն է:

Սրանից հետո Պոլսո հայ պատրիարքարանի կնոթական ժողովը հայտարարում է, որ փոխպատրիարքի պարտականությունը շարունակելու է իրականացնել արք. Աթեշյանը, իսկ արք. Բեքյանը հրաժարական է տվել:

Արք. Բեքյանը հեռացել է Ստամբուլից



Պոլսո հայոց պատրիարքի տեղապահի պաշտոնից պարտադրված հրաժարականից հետո արք. Գարեգին Բեքյանը հեռացել է Ստամբուլից:

Ստամբուլահայ լուսանկարիչ Մուրադ Էզերն իր էջում գրել է. Գարեգին Սրբազան Բեքյանին ճանապարհեցինք: Բարի ճանապարհ: Սիրտը սիրով լցված լավ անձնավորություն: Հայ ժողովուրդը քեզ չի մոռանա:

Նշենք, որ արք. Բեքյանը պարտադրված հրաժարական է տվել, քանի որ, արք. Աթեշյանին հաջողվել է

իշխանություններին դրդել չճանաչել Բեքյանին որպես պատրիարքի տեղապահ:

Աթեշյանին չենք ընդունում, նոր պատրիարք ենք ուզում ընտրել. Կարո Փայլան

Թուրքիայի խորհրդարանի հայ պատգամավոր Կարո Փայլանը ընդվզել է իշխանությունների կողմից արք. Աթեշյանին փոխպատրիարք վերանշանակելու անօրինական քայլի դեմ:

Հայ պատգամավորն իր Twitter-ի էջում գրել է. «Պետությունը պատրիարքարանում հարկադիր կատարողին (նկատի ունի արք. Արամ Աթեշյանին) նշանակելու համար սովորելու արժանի ինտրիգներ իրականացրեց: Բանց մենք հարկադիր կատարողին չենք ընդունում: Ցանկանում ենք նոր պատրիարք ընտրել»:

Նշենք, որ արք. Աթեշյանի երկարատեւ աշխատանքի արդյունքում թուրքական իշխանությունները նրան վերանշանակեցին փոխպատրիարքի պաշտոնում, իսկ եկեղեցու բոլոր կանոններով ընտրված պատրիարքի տեղապահ արք. Բեքյանին ստիպեցին հրաժարական տակ ու հեռանալ երկրից:

Ստամբուլահայ մտավորականները կոչ են արել վերացնել արք. Աթեշյանի պաշտոնը եւ նոր պատրիարք ընտրել



Ստամբուլահայ 72 մտավորականներ գրավոր կոչով են հանդես եկել պատրիարքի ընտրության շուրջ ստեղծված իրավիճակի հետ կապված:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը ստամբուլահայ մտավորականները կոչ են արել վերացնել փոխպատրիարք կոչվող պաշտոնը եւ նախաձեռնել պատրիարքի ընտրություններ:

Մտավորականները կոչ են արել Կրոնական խորհրդին, եկեղեցիների հիմնադրամների ղեկավարներին կատարել իրենց վրա ընկած պարտավորությունը եւ պատասխանատվություն վերցնել տեղի ունեցող իրադարձությունների համար:

Փայլանը պատրիարքի ընտրության հետ կապված ՆԳ նախարարին գրավոր հարցադրում է ուղղել

Թուրքիայի խորհրդարանի հայ պատգամավոր Կարո Փայլանը Թուրքիայի ՆԳ նախարար Մուլեյման Մոյլուին պատրիարքի ընտրության հետ կապված վերջին խոչընդոտների վերաբերյալ հարցադրում է ուղղել:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Կարո Փայլանի գրավոր հարցադրման մեջ հիշեցրել է նախագահ Էրդողանի խոսքերը, որ շատ կարճ ժամանակահատվածում պատրիարքի ընտրության հետ կապված աշխատանքներ կտարվեն:

Կարո Փայլանը հետաքրքրվել է, թե այդ ի՞նչ է փոխվել, որ Էրդողանի հայտարարությունից հետո, որ իշխանությունները խոչընդոտում են ընտրությունների կազմակերպմանը:

Հարցադրման մեջ Փայլանը հետաքրքրվել է, թե ո՞րն է հայ համայնքի հոգեւոր առաջնորդի ընտրության խոչընդոտման հիմքը, թե որտեղի՞ց նահանգապետին իրավունք բոլոր եկեղեցական կանոններով ընտրված արք. Բեքյանին չընդունելու եւ նրան «այսպես ասած տեղապահ» որակելու:

Ստամբուլի հայ համայնքը ստորագրահավաք է նախաձեռնել պատրիարքի ընտրության անցկացման պահանջով

Ստամբուլի հայ համայնքի նախաձեռնությամբ change.org կայքում ստորագրահավաք է սկսվել ընդդեմ փոխանորդի կողմից Պոլսո Հայոց պատրիարքարանի կառավարման, ինչպես նաեւ հանրային քվեարկության միջոցով պատրիարքի ընտրության անցկացման պահանջով:

«Պահանջում ենք, որ վերջ դրվի փոխանորդի կողմից եւ պատրիարքարանի կառավարմանը եւ հանրային քվեարկության արդյունքում ընտրվի հեղինակավոր եւ արժանավոր պատրիարք՝ մեր ավանդույթների եւ քաղաքացիական իրավունքներին համապատասխան», – նշված է հայտարարության տեքստում:

Ստամբուլի հայ համայնքը կոչ է անում հայությանն ամեն հարթակ օգտագործել բողոքելու եւ ներկա իրողությունը մերժելու համար, իսկ Կրոնական ժողովին հիշեցնում իր պատասխանատվությունը հայության առջեւ եւ հորդորում հարգել խոստումը: Կայքում ներկայումս մոտ 550 հոգի է ստորագրել խնդրագրի տակ:

Հիշեցնենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, փետրվարի 20-23-ին տեղի ունեցած Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովում հայտարարություն է ընդունվել Պոլսո պատրիարքությունում ստեղծված վիճակի վերաբերյալ, որտեղ սթափության կոչ էր արվում Բեքյանին, Աթեշյանին, Մաշալյանին: Ավելի վաղ ստամբուլահայ 72 մտավորականներ գրավոր կոչով էին հանդես եկել պատրիարքի ընտրության շուրջ ստեղծված իրավիճակի հետ կապված՝ կոչ անելով վերացնել փոխպատրիարք կոչվող պաշտոնը եւ նախաձեռնել պատրիարքի ընտրություններ:

Նշենք, որ արք. Բեքյանը պարտադրված հրաժարական էր տվել, քանի որ, արք. Աթեշյանին հաջողվել էր իշխանություններին դրդել չճանաչել Բեքյանին որպես պատրիարքի տեղապահ:

Նշենք, որ Պոլսո հայոց պատրիարք, արք. Մեսրոպ Մուրաֆյանը գտնվում է անկողնային վիճակում եւ ֆիզիկապես արդեն 10 տարի չի կարողանում իրականացնել իր պարտականությունները: Ավելի ուշ, երբ հայ համայնքը որոշում է նոր պատրիարքի ընտրություններ անցկացնել, թուրքական կառավարությունը փոխպատրիարք է նշանակում արք. Արամ Աթեշյանին: Նման պաշտոն չկա հայ եկեղեցում:

Հայ համայնքին սա չի բավարարում, քանի որ արք. Աթեշյանը նշանակված անձ լինելով՝ կաշկանդված է հայ համայնքին լիարժեք ծառայելու մեջ եւ իշխանամետ պահվածքով է մշտապես հանդես եկել:

Այս պայմաններում 2016–ին Ստամբուլի հայ համայնքի ճնշման տակ արք. Արամ Աթեշյանը հրաժարական է տալիս եւ պատրիարքական տեղապահի ընտրություն է անցկացվում: Արդյունքում պատրիարքական տեղապահ է ընտրվում արք. Գարեգին Բեքյանը: Այնուհետ սկսվում է նոր պատրիարքի ընտրության գործընթաց, որի շրջանակներում ստեղծված պատրիարքի նախաձեռնող խումբը մի քանի անգամ դիմել է Ստամբուլի նահանգապետարանին եւ ՆԳՆ–ին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել:

Իսկ փետրվարի 5–ին Ստամբուլի նահանգապետարանի ուղարկած նամակում նշվել է, թե Հայոց պատրիարք Մեսրոպ Մուրաֆյանը դեռ ողջ է, եւ նոր պատրիարք ընտրելու համար անհրաժեշտություն դեռ չկա եւ շեշտվել, որ չեն ճանաչում արք. Բեքյանին ու նրա որոշումները օրինական չեն ընդունում:

Այնուհետ փետրվարի 7–ին հայ համայնքի ներկայացուցիչները հանդիպում են Թուրքիայի ՆԳ նախարարի, Ստամբուլի նահանգապետի, Ստամբուլի ոստիկանապետի, Ստամբուլի ժանդարմերիայի հրամանատարի եւ այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հանդիպումը փաստացի անօգուտ է եղել հայ համայնքի համար, քանի որ 2 օր անց արք. Արամ Աթեշյանը կրկին դարձավ փոխպատրիարք: ՆԳ նախարարը հայտնել է, որ հայ համայնքի հետ հաջորդ հանդիպումը տեղի է ունենալու մեկ ամսից, երբ ինքը հայերի պահանջների մասին կհայտնի նախագահին ու վարչապետին:

Ձմռանը Անի այցելողների թիվը 3 անգամ ավելացել է



Ներկայումս Թուրքիայի տարածքում հայտնված հայոց Բագրատունիների օրոք մայրաքաղաք հանդիսացած Անին ձմռանն էլ շարունակում է ընդունել թուրք եւ արտասահմանցի զբոսաշրջիկների:

Թուրքական Sabah–ի փոխանցմամբ՝ Կարսի թանգարանի տնօրեն Նեջմեթին Ալիը նշել է, որ առաջին անգամ ձմռանը Անի այցելողների մեծ ան է գրանցվել: Նա շեշտել է, որ Կարս, Մարիդամիշ եւ Չըլդըր (Շովակ–խմբ) այցելող տեղացի եւ արտասահմանցի զբոսաշրջիկները անապաման Անիի էլ են այցելում: Նրա խոսքով այս տարի ձմռանը Անի այցելողները թիվը 3 անգամ ավելացել է նախորդ ձմեռների համեմատ:

Նշենք, որ Անիում որեւէ ցուցանակի վրա չկա «հայ» կամ «Հայաստան» գրություններ:

Թուրքական դատարանը հայերին է վերադարձրել հայտնի «Սանասարյան հանը»



Թուրքիայի վճռաբեկ դատարանը չեղարկել է առաջին ատյանի դատարանի որոշումը «Սանասարյան հան»-ը թողնել Թուրքիայի հիմնադրամների վարչության տնօրինության տակ:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ժամանակ»-ը, Ստամբուլի Սիրքեջի թաղամասում գտնվող «Սանասարյան հանը» վճռաբեկ դատարանի վճռով վերադարձավ հայոց պատրիարքարանին:

Նշվում է, որ «Սանասարյանի հանի» վերադարձի համար արք. Արամ Աթեշյանը դատարան էր դիմել դեռևս 2014-ի հուլիսի 3-ին:

Նշենք, որ «Սանասարյան հանը» կառուցվել է հայ բարեգործ Մկրտիչ Սանասարյանի կողմից 1895 թվականին: Ծենքի ճարտարապետն է եղել Հովսեփ Ազնավուրը:

Սիյուռը

Հայկական արմատներով ամերիկացին ղեկավարում է ԱՄՆ ՌՕՌ կենտրոնական հրամանատարությունը



Հայկական ծագումով ամերիկացի Ջեֆրի Հարիզյանը ղեկավարում է ԱՄՆ ռազմաօդային ուժերի կենտրոնական հրամանատարությունը:

Գեներալ-լեյտենանտ Ջեֆրի Հարիզյանը պատասխանատու է արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրի մշակման համար եւ Կենտրոնական եւ Հարավարեւմտյան Ասիայի 20 պետություններում օդային գործողությունների իրականացման համար:

Նրա հայկական արմատների մասին պատմել է Միքայել Թաթոյանը՝ «Dover International Speedway»-ի տնօրենը եւ «Dover Motorsports»-ի գործադիր տնօրենը, որն ԱՄՆ-ում ունի մի քանի մրցավազքային գոտիներ:

«Armenia Proud»-ի հետ հարցազրույցում Թաթոյանը պատմել է, որ մասնակցում է ԱՄՆ ՌՕՌ ծրագրում, որի

շրջանակներում նրանք քաղաքացիական հասարակության հետ հարաբերություններն են կարգավորում:

Ծրագրի շրջանակներում ճեպագրույցներից մեկը վարել է Ջեֆրի Հարիզյանը: Թաթոյանը նշել է, որ ճեպագրույցից հետո նա մոտեցել է Հարիզյանին եւ ասել, որ ինքը նույնպես հայ է: «Մենք անմիջապես գրկեցինք իրար, ձեռքերը սեղմեցինք: Սկսեցինք խոսել մեր նախնիների, ընտանիքների, սննդի մասին: Նա հայի արտաքին ունի», - ասել է Թաթոյանը:

Ստամբուլում հայտնի հայ բժշկ է մահացել



Ստամբուլում 79 տարեկանում մահացել է Թուրքիայի ամենահայտնի մաշկաբան Հակոբ Քոթոյանը:

Այս մասին իր Twitter-ի էջում գրել է Թուրքիայի հայ կին պատգամավոր Սելինա Դոդանը: «Տխրել ենք, քանի որ կոցրել ենք մեր երկրի ամենաարժեքավոր մաշկաբան, պրոֆ. Հակոբ Քոթոյանին: Աստված հոգին լուսավորի», - գրել է Սելինա Դոդանը:

Նշենք, որ Հակոբ Քոթոյանը Թուրքիայում հայտնի է եղել «Անթե Հակոբ» անունով, քանի որ երիտասարդ ժամանակ արհեստանոցում թելը կոցրել էր, սակայն դա չէր խանգարել նրան սովորել բժշկություն եւ մի ձեռքով հրաշքներ գործել: Նա սիրված ու հարգված բժիշկ էր ամբողջ Թուրքիայում:

Թուրքիայի ՆԳ նախարարը եւ Ստամբուլի ուժային կառույցների ղեկավարները հանդիպել են հայ համայնքի ներկայացուցիչների հետ



Ստամբուլի նահանգապետարանում փետրվարի 7-ին տեղի է ունեցել նախատեսված հանդիպումը հայ համայնքի հիմնադրամների ղեկավարների, ազդեցիկ անդամների ու Թուրքիայի ՆԳ նախարարի, Ստամբուլի ոստիկանապետի, Ստամբուլի ժանդարմերիայի հրամանատարի, Ստամբուլի նահանգապետի եւ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Ինչպես տեղեկանում ենք Ստամբուլի հայկական «Ակոս»-ից, հանդիպմանը բացման խոսքով հանդես է եկել ՆԳ նախարար Սուլեյման Սոյլուն՝ ներկայացնելով Թուրքիայի

հրավիճակն ու կարելիությունները ժողովրդավարական արժեքների պահպանումը ամեն ինչում:

Հայ համայնքից ելույթով հանդես եկած պատրիարքական ընտրության նախաձեռնող խմբի խոսնակ, իրավաբան Սեպուհ Ավանգիրը գոհունակություն է հայտնել, որ նախարարը ժողովրդավարությունից է խոսում՝ ուշադրություն հրավիրելով պատրիարքարան ուղարկված Ստամբուլի նահանգապետարանի նամակի վրա, որում նշվում է, որ իշխանությունները չեն ճանաչում ժողովրդավարական բոլոր օրենքներով պատրիարքի տեղապահ ընտրված արք. Բեքյանին: Սեպուհ Ավանգիրը նշել է, որ Հայոց պատրիարքարանում բոլոր գործընթացները երկրի օրենքներին ու եկեղեցական կարգերին համապատասխան են արվել եւ նման նամակի բովանդակությունը իրենց տխրեցրել է:

Այս ելույթից հետո խոսքով հանդես եկած հայ համայնքի ներկայացուցիչները պնդել են, որ հնարավոր չէ շարունակել արք. Արամ Աթեշյանի հետ:

Հանդիպման վերջում ՆԳ նախարար Սուլեյման Սոյլուն նշել է, թե քննարկումների եւ առաջադրված պահանջները կհայտնի նախագահ Էրդողանին եւ վարչապետ Յըլդըրմին, որից հետո մեկ ամիս անց նորից կհանդիպեն հայ համայնքի ներկայացուցիչներին հետ:

Ստամբուլի նահանգապետարանի ուղարկված նամակում նշվել է, թե Հայոց պատրիարք Մեսրոպ Մուշաֆյանը դեռ ողջ է, եւ նոր պատրիարք ընտրելու համար անհրաժեշտություն դեռ չկա:

Հայ համայնքին սա չի բավարարում, քանի որ արք. Աթեշյանը նշանակված անձ լինելով՝ կաշկանդված է հայ համայնքին լիարժեք ծառայելու մեջ եւ իշխանամետ պահվածքով է մշտապես հանդես եկել:

Այս պայմաններում 2016-ին Ստամբուլի հայ համայնքի ճնշման տակ արք. Արամ Աթեշյանը հրաժարական է տալիս եւ պատրիարքական տեղապահի ընտրություն է անցկացվում: Արդյունքում պատրիարքական տեղապահ է ընտրվում արք. Գարեգին Բեքյանը: Այնուհետ սկսվում է նոր պատրիարքի ընտրության գործընթաց, որի շրջանակներում ստեղծված պատրիարքի նախաձեռնող խումբը մի քանի անգամ դիմել է Ստամբուլի նահանգապետարանին եւ ՆԳՆ-ին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել:

Ավելի ուշ պարզվել է, որ Ստամբուլի նահանգապետարանը փետրվարի 7-ին քննարկման է հրավիրել հայ համայնքի հիմնադրամների ներկայացուցիչներին ու նախաձեռնող խմբի խոսնակին: հանդիպմանը ներկա է լինելու նաեւ ՆԳ նախարարը:

Միջազգային

Հայտնի է դարձել Թուրքիայի բնակչության թիվը

Թուրքիայի բնակչությունը 2017-ին ավելացել է նախորդ տարվա համեմատ 1 մլն-ով:

Թուրքական Cumhuriyet-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի վիճակագրական վարչությունը հայտնել է, որ 2017-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թուրքիայի բնակչությունը կազմում է 80 մլն 810 հազար 525 մարդ:

Բնակչության 50.2 տոկոսը կազմում են արական սեռի ներկայացուցիչները, 49.8 տոկոսը՝ իգական:

Ստամբուլում գրանցված բնակչության թիվը կազմել է 15 մլն 230 հազար, որը նախորդ տարվա դրությամբ ավելացել է 1.5 տոկոսով: Թուրքիայի բնակչության միջին տարիքը տղամարդկանց մոտ կազմել է 31.1, կանանց՝ 32.4:

Գերմանացի քաղաքական գործիչը թուրքերին «ուղտապաններ» է անվանել եւ հիշեցրել է Հայոց ցեղասպանության մասին



Գերմանացի ընդդիմադիր քաղաքական գործիչ Անդրե Պոգենբուրգը թուրքական համայնքին «ուղտապաններ է» անվանել: «Այլընտրանք Գերմանիայի համար» ծայրահեղ աջ կուսակցության սաքսոնական խմբակցության անդամը պատասխանել է թուրքական համայնքի քննադատությանը նոր կոալիցիոն համաձայնագրի շրջանակներում նախատեսված նոր նախարարության ներդրման հայեցակարգի վերաբերյալ:

«Այդ չաման վաճառողների հաշվին 1.5 միլիոն հայ կա... եւ նրանք դեռ ցանկանում են ինչ-որ բան ասել մեզ պատմության եւ հայրենիքի մասին: Նրանք խելագարվել են: Այդ ուղտապանները պեք է սկսեն մտածել այն մասին, թե ինչ ժողովրդի են պատկանում», - ասել է Պոգենբուրգը: Նա նաեւ խստորեն քննադատել է երկքաղաքացիության ընդունման վերաբերյալ թուրքական համայնքի կոչերը:

Ամենալավ թուրքը մեռած թուրքն է. հույն նախկին նախարար



Հունաստանի նախկին ԱԳ նախարար Թեոդորոս Պանգալոսի հակաթուրքական արտահայտությունը մեծ արձագանք է գտել Հունաստանում եւ Թուրքիայում:

Թուրքական Gazetevatan պարբերականի փոխանցմամբ՝ Հունաստանի նախկին ԱԳ նախարար Թեոդորոս Պանգալոսը մի հեռուստահաղորդման ընթացքում անդրադարձել է Հունաստանի համար խնդիրներին՝ դրանցում շեշտելով «թուրքական մեծ խնդիրը»:

«Մենք ինչքան էլ բարի կամք դրսևորենք, Թուրքիան մեր հանդեպ թշնամանքից չի հրաժարվում: Ամենալավ թուրքը մեռած թուրքն է: Ես դրան հավատում եմ, քանի որ մինչեւ հիմա լավ թուրքի չեն հանդիպել», - ասել է Հունաստանի նախկին ԱԳ նախարարը:

Նիդերլանդների արտգործնախարարը հարգում է Հայոց ցեղասպանությունը ճանաչելու կոչը



Նիդերլանդների արտաքին գործերի նախարար Միգրիդ Կաագը հարգում է խորհրդարանի «ոգևորությունը» Հայոց ցեղասպանության ճանաչման կապակցությամբ, սակայն չի մեկնաբանի կառավարության դիրքորոշումը, մինչև հաջորդ շաբաթ խորհրդարանը չքննարկի հարցը:


Հոլանդական հանրային հեռարձակող NOS-ին տված հարցազրույցում Կաագը նշել է, որ կառավարությունը միշտ էլ անդրադառնում է այս հարցին՝ որպես «Հայոց ցեղասպանության հարց»:

Ըստ NOS-ի՝ նախարարը հրաժարվել է մեկնաբանել, թե կառավարության անդամը մասնակցելու է արդյոք ապրիլին Երևանում տեղի ունեցող իրադարձություններին: Մակայն Հաագայում հեռարձակողի աղբյուրները նշում են, որ միջոցառումներին Նիդերլանդների ներկայացուցիչը մասնակցելու է: Նախագծի հեղինակն է «Քրիստոնեական միություն» կուսակցության պատգամավոր Յոել Ֆորդեվինդը:

Հասարակական

Հայդատական ավանտյուրաներ. 1921 թ. փետրվարյան դաշնակցական խռովությունը

Դաշնակցական-հայդատական այս ավանտյուրան, ըստ Հույսյան, առաջին եղբայրասպան քաղաքացիական պատերազմն է հայոց պատմության մեջ: Դա ոչ միայն ինքնաբերական ժողովրդական ապստամբություն չէր սովետական նորահաստատ իշխանության դեմ, այլև ցեղասպան Թուրքիայի հետ կնքված իսլամադավան գործարքի արդյունք: Այդ շրջանում էր հենց, որ Մոսկվայում ընդունվում էին Ռուս-թուրքական պայմանագրի բանակցությունները: Այս ավանտյուրայի պատճառով հայկական կողմը չկարողացավ մասնակցել բանակցություններին, ինչով լավագույն պայմաններ ստեղծվեցին Թուրքիայի համար՝ առավելագույնն ստանալու մարտի 16-ին կնքված պայմանագրով:



ԼԵՈ, Անցյալից, Երևան, 2009, էջ 421-423

Բայց մինչ Թիֆլիսում նոր ժամանակի վաղ-վավուկներն էին ծավալվում, Հայաստանում բոլորված էր ազգամիջյան եղբայրասպան պատերազմը: Համառ կռիվներ էին տեղի ունենում Երևանի հյուսիսային կողմերում. մինևույն ժողովրդի երկու հատվածները, իրար դեմ լցված անսահման կատաղությամբ, պատրաստվում էին իրար ոչնչացնել: Կարմիր բանակի մասերը Վրաստանից ուղղվեցին դեպի այդ ընտանեկան պատերազմի դաշտը: Ի՞նչ էր կատարվում Երևանի մեջ՝ հաստատապես ոչ ոք չգիտեր: Թիֆլիսի հայկական շրջանակներում այն կարծիքն էր տիրում, թե Վրացյանն ու իր ընկերները չգիտեն, որ Վրաստանն արդեն գլխավոր խորհրդայնացել է, որ մենշևիկները փախել են արտասահման, ուստի և շարունակում են կռվել՝ հույսերը դրած մենշևիկների օգնության վրա: Այդ պատճառով որոշվեց մի պատվիրակություն ուղարկել Երևան՝ հաստատ տեղեկություններ հաղորդելու և համոզելու համար, թե դիմադրությունն այլևս ապարդյուն է: Բայց պատվիրակության փոխարեն կարելի համարվեց ուղարկել միայն Հովհաննես Թումանյանին, որ և անհապաղ ճանապարհ ընկավ: Վերադարձավ նա բավական ուշ, Վրացյանի արկածախնդրության վերջ դրվելուց հետո, և մի օր Հայաստան դառնալու հանգամանքներն և փաստալից մի գեկուցում արավ՝ նրա անդամների առջև:

Բանից դուրս եկավ, որ փետրվարյան ապստամբությունը Դաշնակցության ինքնապաշտպանության վերջին գործողությունն էր եղել: Դեռ նոր սարսափելի կերպով ջարդ ու փշուր եղած Քյազիմ Կարաբեքիր-փաշայից՝ դաշնակցական անխելք տղաները ձեռնարկել էին պատերազմելու արդեն Կարաբեքիրի շատ [ավելի] հզոր Ռուսաստանի դեմ: Կապովի գծի մի գործ: Հովհաննես Թումանյանին Վրացյանն ընդունել էր իբրև թշնամու և տնային բանտարկության էր ենթարկել՝ ասելով, թե նա վիատություն է մտցնում Հայաստանի փրկության կոմիտեի գործերի մեջ: «Հայաստանի փրկության կոմիտե»՝ այսպես էր իրեն հորջորջում Վրացյանի այս նոր կառավարությունը: Ինչպե՞ս էր նա ուզում փրկել Հայաստանը: Հովհաննես Թումանյանը բերել էր իր հետ Փրկության կոմիտեի օրգան «Անկախ Հայաստանի» մի քանի համարներ և երկար ընթերցումներ արավ նրանից: Ընթերցումներ, որոնք ապշեցուցիչ տպավորություն թողին լսողների վրա: Վատ թղթամուրի նման ամեն ինչ, նույնիսկ պատիվ տանուլ տված դաշնակցականները փոխանակ Ալեքսանդրապոլի խայտառակ դաշնագրից հետո գետինը մտնելու և անհայտանալու՝ հույսները հիմա դրել էին Կարաբեքիրի վրա և ուզում էին նրա հետ միանալ ու նրա հետ միասին կռվել Ռուսաստանի դեմ: Այս եղանակով պիտի կատարվեր Հայաստանի ազատությունը: Դաշնակցությունը մեղայական էր կարդում Թուրքիայի առաջ, դատապարտում ու նզովում էր իր ամբողջ անցյալը, իր պապերին ու սրբերին, իր հազարավոր նահատակներին: «Մենք երեսուն տարի սխալված էինք՝ մեզ թշնամի համարելով օսմացիությունը,՝ գրում էր «Անկախ Հայաստանը»,՝ մինչդեռ մեր իսկական թշնամին ռուսն է եղել, որից ազատվելու համար մենք պիտի միանայինք թուրքերի հետ»:

Հիշողությանս մեջ չի մնացել այդ հողվածների ամբողջ բովանդակությունը: Տալիս եմ հիմնական միտքը: Հիշում եմ՝ մենք չէինք հավատում մեր ականջներին, այնքան զգվելի էին

այդ մեղայականների լալիշ դարձվածքները, այնքան ստոր էր այդ թժնող գետնաբարշտությունը: Երեսուն տարի ապրել իբրև հեղափոխական կուսակցություն և գալ հասնել այսքան նողկալի ցածության... Մարդու հավատը չէր գալիս, այնքան կոպիտ-շնական էր այս տեսարանը: Եվ ի՞նչ: Այս միայն լրագրական տեսություն չէր, այս մի թեորիա չմաց, այլ, ինչպես իմացանք հետագա հաղորդագրություններից և տպված նամակներից, Վրացյանը այդպիսի մի ցնորամիտ առաջարկություն արել էր օսմանցիներին: Բայց Կարաբեքիրը Վրացյան չէր, նա լավ գիտեր իր երկրի շահերը: Դաշնակցական շեֆն էր, որ չէր կարողանում ըմբռնել, թե չկա այլևս մեկը, և չի կարող լինել մեկը, որ հավատ ընծայի իրեն և իր կուսակցությանը: Չէր ըմբռնում և այն մանավանդ, որ եթե Թուրքիան ազատվել էր վերջնական խորտակումից, այդ միայն շնորհիվ Խորհրդային Ռուսաստանի օգնության էր, օգնություն, որին կարոտ էր Թուրքիան և՛ այն ժամանակ, և՛ հետո էլ, երկար ժամանակով: Էլ ի՞նչը պիտի հարկադրեր, որ Թուրքիան հակառակ գնար իր այդ բարերարին: Դաշնակցության սե՛րը: Ո՛հ, բայց այստեղ այլևս ինչպես պահես ծիծաղող, դառն հեզնական ծիծաղող...

Թեև պատերազմն արդեն ամսից ավելի էր տիրում, բայց պարզ էր, որ Վրացյանի և ընկերների դրությունը հուսահատական էր, ուստի և հուսահատական էին նրանց ընդունած միջոցները: Ինչպես հուսահատական էր օսմանցիներին դիմելը, հուսահատական էին և ժողովրդին մոլորեցնելու, խաբելու ճիգերը: Այն ժամանակ, երբ Վրաստանում այլևս մի հատ դիմադրող մենչևիկ չէր մնացել, Երևանում հեռագրեր էին թխվում, թե մենչևիկները հաղթություններ են տանում, թե նրանց հետ բոլշևիկների դեմ կռվում են Անտանտի նավերը՝ ռմբակոծելով Սև ծովի ափերը: Միաժամանակ դժբախտ ժողովրդին հուսահատական վճռականություն հաղորդելու համար հավատացնում էին, թե ռուս զինվորներն իրենց հետ ունեն և կացիններ և այդ կացիններով կոտորում են ժողովրդին, թե Թիֆլիսում այս կերպով ջարդել են 15 հազար մարդ, և ամբողջ Բեիբուլյան փողոցն այլևս գոյություն չունի: Հովհաննես Թումանյանը պատմում էր, թե այս կացնի սարսափն այնքան մեծ է եղել, որ Աշտարակի կողմից մի քանի հարյուր ընտանիքներ փախել գնացել են, որ Արաքսն անցնեն և թուրքերի մոտ ապահովություն գտնեն...

ԼԵԻՈՆ ՉՈՐՄԻՍՅԱՆ, Կուսակցությունները, Երևան, 1995, էջ 108-110

Դեպքերու ընթացքին մեջ տրամաբանության համար քիչ-շատ ընդունելի շարայարություն մը փնտռող միտք մը նոր հաներուկի մը առջեւ կը գտնէ ինքզինքը բացատրելու համար 1921 Փետր. 18-ի ապստամբությունը: Դեպքի անցուդարձերուն շուրջ քառասուն տարիներէ ի վեր կատարուած նկարագրություններէն եւ մեկնություններէն ճշմարտանման եղածները միայն աչքի առաջ ունենալով, պարզ կ'երեւի որ **պատմական որեւէ ճշմարտութեան չի համապատասխաներ կարգ մը դաշնակցական գործիչներու այն յատարարութիւնը թէ ապստամբութիւնը ժողովրդական տարերային պոռթկում մըն էր նորահաստատ իշխանութեան սկզբնական օրերու խստութիւններուն եւ բռնութիւններուն դէմ:** Այդ յատարարութիւնը կատարող

դաշնակցականները թէեւ կ'ուզէն սովետական իրավակարգին դէմ ժողովրդական ատելութեան մը իբրեւ գործնական ապացոյցը ներկայացնել ապստամբութիւնը, բայց իրականին մէջ, ծանր յանցանք մը եւ սխալ մը ընդունելով ըմբոստացման արարքը, չեն ցանկար անոր մեղքը կուսակցութեան ուսերուն բեռնել: Պարզ է նոյնպէս որ ապստամբութիւնը բանտարկուած դաշնակցականներու կենաքը վտանգէ փրկելու դիտումով կատարուած ահաբեկչական ձեռնարկի մը բնոյթն ալ չունէր: Այդ մասին ալ յաճախ կը խօսին ու կը գրեն դաշնակցականները, բայց քանի մը դաշնակցականներու անուններէն զատ մինչեւ այսօր ճիշդ թիւ մը զոհերու՝ երբեք չեն յիշատակած: Ընդհանուր, տարտամ, անորոշ բայց զանգուածային սպաննութիւններ կատարուած ըլլալու տպաւորութիւնը կը ձգեն իրենց յատարարութիւններով, բայց որեւէ վիճակագրութիւն, անուանացանկ չեն հրատարակած:

Իրաւակարգի հիմնական փոփոխութիւն մը, ինչպէս էր հաստատումը սովետական վարչաձեւին, չէր կրնար տեղի ունենալ առանց յեղափոխական ցնցումի եւ անոր անխուսափելի հետեւանքը եղող դէպքերուն: Այժմ, պարզուած է որ նուազագոյն չափի եւ սահմանի մէջ մնացած են Հայաստանի մէջ նման դէպքերը, բաղդատմամբ տարբեր ժողովուրդներու եւ երկիրներու մէջ տեղի ունեցածներուն:

Այս խորհրդածութիւններուն վրայ պետք է աւելացնել նաեւ հետեւեալը: Փետր. 18-ի ապստամբութիւնը կը սկսէր ճիշդ այն պահուն երբ Վրաստանի մէջ իրաւակարգի փոփոխման, այսինքն սովետական իրաւակարգի հաստատման գործողութիւնը տեղի կ'ունենար: Կարելի չէ պատահականութեան վերագրել այս զուգահիստութիւնը:

Կամ այն է որ դաշնակցականները հասարակ մարդու քաղաքական հասկացողութիւն իսկ չունէին, խորհելով որ Ագրբէյճանի եւ Վրաստանի սովետացումէն յետոյ կարելի է պահել Հայաստանը սովետացումէ եւ կամ, ինչ որ աւելի հասկանալի է, կը խորհէին սովետական ուժերուն դէմ նոր ճակատ յարդարելով արգելք հանդիսանալ Վրաստանի սովետացման: Եթէ այս վերջին ենթադրութիւնն է ճիշդը, բանաւոր է հարց տալ թէ որո՞ւ թելադրութիւնով կամ նոյնիսկ հրահանգով կատարուեցաւ ապստամբութեան ձեռնարկը:

Օրին մէկը կը պարզուին անշուշտ պատմութեան համար ցարդ մութ մնացած այս բոլոր կէտերը, բայց երբ մարդ կը հարկադրուի նման հարցումներ ներկայացնելու, այդ հարկադրանքն իսկ իր մէջ կը բովանդակէ խոր տարակուսանք մը օրուան դեկավարներուն ազգային շահերու պաշտպանութեան եւ հայրենասիրութեան գործնական ըմբռնումներուն մէջ ցոյց տուած հայրենասիրական ոգիին եւ պարկեշտութեան մասին: Արկածախնդրութիւնը վերջ գտաւ ամբողջապէս մէկուկէս ամիս յետոյ, այս անգամ իրական արհեստագործութեամբ: Պարտուողները լքեցին հայրենիքը կնքելով իրենց մեկնումը բազմաթիւ յեղափոխական երիտասարդներու արիւնով եւ այդ կերպով փակելով վերադարձի բոլոր կարելիութիւնները: Յեղափոխական արարք մը ըլլալէ շատ հեռու էր անշուշտ կատարուածը: Քինախնդրութեան, վրէժխնդրութեան, ատելութեան զգացումներէն թելադրուած վերջին հարուած մըն էր պարզապէս քաղաքական ազգակից հակառակորդներուն դէմ ուղղուած:

<http://www.ilur.am/news/view/43530.html>

ارآن، آذربایجان، جنایت و توسعه طلبی

خلاصه ای از تاریخ ارآن و سرنوشت شوم آن

تألیف: ادیک باغداساریان (۱. گرمانیک)

(۶)

عواقب فتوحات تازیان


فتوحات تازیان و تشکیل خلافت آنان در خاور نزدیک و میانه (دهه های ۴۰-۳۰ سده ۷م). اوضاع سیاسی- نظامی و اجتماعی- اقتصادی جدیدی پدید آورد که با تمام عواقب خود نقش سرنوشت سازی در زندگی مردمان منطقه ایفا نمود. حرکتها و مهاجرت های طوایف کوچ نشین ترک آسیای میانه دور دست چه در موطن خود و چه خارج از مرزهایشان عمیقاً " با حکومت تازیان در این دوران مرتبط بود. اینها، به نظر ما عمدتاً" به سیاست تازیان در خاور نزدیک و میانه، گسترش اسلام و شرایط مناسب پدید آمده بعد از آنها مربوط بودند. تا زمان فتوحات تازیان و گسترش اسلام نیز طوایف ترک که اجدادشان از زمان های باستان در نواحی شمالی چین می زیستند، مهاجرت خود را آغاز کرده از سده های ۶-۴ تدریجاً" به سمت غرب در سواحل خزر و سپس دانوب گسترش می یافتند.

مهاجرت طوایف ترک جنگ طلب پیش از دوران تازیان دلایل و انگیزه هایی داشت که بررسی آنها بیرون از حوصله این مقاله می باشد. هدف اصلی ما بررسی نفوذ و رخنه طایف ترک به خاور نزدیک بر اساس منابع عرب زبان می باشد، رخنه ای که در دوره آغازی سلطه خلفای عرب بغداد (۱۲۵۸-۷۵۰م). شروع شد. با این حال باید گفت که یکی از دلایل مهاجرت ترکان جستجوی مراتع و چراگاه های جدید بود. این مهاجرت ها معمولاً" توأم با برخورد خونین با مردمان بومی بود. ترکان موفق نشدند از جنوب مقاومت شدید ساسانی را در هم بشکنند، گر چه آنان در آنجا بسیار فعال بودند. با این حال یکی از اقوام ترک در یکی از مهاجرت های سده دهم میلادی از ترکستان غربی خارج شده در خراسان حکومت غزنوی (سده های ۱۲-۱۰م). را پایه گذاری نمود. در عین حال، در نیمه دوم سده دهم، حرکت جدیدی در ترکستان آغاز شد که پیرو آن حکومت جهانگشای سلجوقی پایه گذاری گردید و بنا به گفته مارکس «تمام روابط را در آسیای مقام» تغییر داد.

ترکان پیش از اسلام برای تازیان آشنا بودند و این آشنایی اساساً" توسط منابع فارسی و ایرانی حاصل شده است. اما تماس گسترده آن دو دیرتر و از زمان حلفای عمان صورت گرفت (۷۵۰-۶۶۱م). می دانیم که تازیان از خراسان وارد خوارزم (آغاز سده ۸م). شده ماوراءالنهر را تصرف نموده در این سرزمین ایرانی استحکام یافتند (سغد با پایتخت های بخارا و سمرقند، خوارزم و غیره). طوایف اغوز (ترکمن) که تا آن زمان به اینجا مهاجرت کرده بودند تقریباً" این استان های متمدن ایرانی را تغییر شکل داده بودند و این نواحی در آینده پایگاه مستحکمی برای اقوام یاد شده جهت نفوذ دست اندازی به ایران و آسیای مقدم شدند (سده ۱۱م). مردمان بومی ایرانی سغد و خوارزم در مقابله با طوایف مهاجم ناکام بودند لذا بخش اعظم ماوراءالنهر بتدریج به ترک نشین شد. در آن زمان در نواحی مرزی شمال شرقی خلافت عرب (بویژه گرگان، نواحی میان دریای خزر تا جنوب شرق)، نفوذ ترکان بی سرو صدا و راحت صورت گرفت. به همین علت است که نمی توان تاریخ دقیقی برای گسترش ترکان در نواحی مذکور مشخص نمود.

طوایف ساکن شده در این استانهای ایرانی، همچنین طوایف ساکن شده در این استانهای ایرانی، همچنین غزنویان، به اسلام گرویدند و با ایجاد تماس با دنیای عرب، تحت تاثیر فرهنگ عرب قرار گرفتند. اما سایر اقوام هم نژاد آنان که در نواحی شرقی آسیای مرکزی ساکن بودند، طبیعتاً" تحت تاثیر فرهنگ چین قرار داشتند.

در دنیای اسلام سده نهم دیگر اطلاعاتی راجع به ترکان وجود داشت. در منابع عربی سده های میانه اطلاعات زیادی در باره طوایف مختلف ترک وجود دارد. کافی است یادآور شویم که از سده نهم جغرافیدانان عرب (ابن الفقیه، المسعودی و غیره) در آثارشان راجع به تعدادی از اقوام ترک مطالبی ذکر کرده اند. در هر حال، تصویر اصلی ترکان نواحی مرکزی خلافت عرب توسط اسیران جنگی و برده های ترک پدید می آمد. برای نمونه، جالب است که در دوره اولیه خلافت عرب، حاکمان خراسان و شرق تنها اسرای جنگی و برده های ترک را به عنوان خراج به بغداد می فرستادند. المقدسی جغرافیدان سده ۱۰م. در این باره می نویسد که خراج سالانه خراسان شامل ۱۲ هزار برده ترک بود (المقدسی، ۳۴۰).



بالای ترک تدریجا" شروع به دخالت در امور دربار کردند و کسانی که مورد پذیرش آنان نبودند عزل و افراد مطلوب به خلافت می رسیدند. برمکیان ایرانی تبار برای جانشینی ترکان پا به عرصه گذاشتند و امور اساسی دربار را در دست خود گرفته بر امور داخلی و خارجی دربار عباسیان نفوذ و تاثیر زیادی پیدا کردند. مورخان عرب سده های میانی، اختلافات و شکافی که در دربار خلفا ایجاد شده بود به عنصر ترک نسبت می دهند و برآستی نقش منفی آنان را در زندگی حکومتی عباسیان مورد تاکید قرار می دهند. نظامیان ترک پس از رسیدن به مقام های عالی نظام سیاسی و اقتصادی خلافت عباسی را واقعا "تضعیف نمودند. افزون بر آن، اسیران آورده شده از آسیای میانه، پس از سده نهم میلادی، صاحب زمینهایی در ایران، تارسون، آدانا، ماراش، ملطیه، خلعت، منازگرد و کارین شدند. این بخشش اراضی تدریجا "محدود به درباریان و تنها در پهنه عراق شد. احمد ابن تولون و محمد ابن توغچ از فرماندهان نظامی ترک مصر و سوریه تدریجا "مستقل شدند و فعالیت آنان زمینه را برای استقرار خلافت فاطمیان (۱۱۸۱-۹۰۹م). با عرب آماده ساخت.



بدین ترتیب تا سده ۱۱م. ترکان بعنوان عنصر جنگی به خاور نزدیک رخنه کردند. این مهاجرت ها از طریق ایران به سوی نواحی مرکزی حکومت عرب هرگز ماهیت گروهی و توده ای بخود نگرفتند. این سربازان مزدور با قطع ارتباطشان از موطن خود و با قرار گرفتن در زیر نفوذ فرهنگ اسلامی، تدریجات مستحیل شدند. گرچه تعداد آنان در پهنه گسترده خلافت عرب بسیار ناچیز بود. اگر چه آنان در حیات سیاسی-نظامی دربار صاحب نقش



خلافت عرب - راشدین

جنبش های مردمی ضد عباسی در پهنه گسترده خلافت عرب که از سده نهم میلادی آغاز شده بودند و نیز تضادهای داخلی دربار و نیز دسیسه های برمکیان ایرانی تبار که به منصب های عالی حکومت بغداد رسیده بودند، خلفا را به این اعتقاد هدایت کردند که می بایست یک ساختار قوی نظامی متشکل از عناصر غیر عرب و غیر ایرانی پدید می آورد. به همین علت بود که اسیران جنگی و برده های ترک که از ماوراء النهر و کشور خزران آورده می شدند جایگاه خاصی یافتند، بدین سان ارتقاء غلامان ترک به مناصب عالی نظامی خلافت آغاز گردید.

ارجحیت جنگاوران ترک نخست این بود که هیچ ربطی به محیط جدید نداشتند و منافع مردم بومی بر ایشان نامأنوس بود. سپاه ترکان در وهله نخست برای سرکوب شورشهای پایتخت بغداد مورد استفاده قرار گرفت و بدین ترتیب تکیه گاه مطمئنی برای دفاع از خلافت و سرکوب جنبش های مردمی گردید.

گر چه در اوایل سده نهم م. در زمان خلافت مأمون (۸۳۸-۸۱۳م). لشکر ترک قدرت نظامی بالایی داشت اما جنبش های ضد عباسی بی وقفه ادامه می یافتند.

لشکرهای آماده ترک به مهمترین مراکز ضد عرب و ضد فتودالی ارسال می شدند. برای نمونه، نظامیان ترک در مبارزه ۲۰ساله سپاه عرب در برابر جنبش بابک خرمدین جایگاه مهمی داشتند و در اثر تلاش آنان بود که سرانجام در سال ۸۳۳م. بابک دستگیر و در سامره به مرگ محکوم گردید.


نقش عنصر جنگجوی ترک در دستگاه خلافت عرب چنان اهمیت یافت که بعدها خلفا تبدیل به عروسکی در دست آنان شدند و این امر بویژه در زمان معتصم مشهود بود. فرماندهان رده

کردند.



قلمرو امپراتوری سلجوقیان

بدین سان، در نتیجه حملات راهزنانه، ظلم‌های غیر انسانی و قتل و غارتها، عنصر ترک صاحب اوضاع خاور نزدیک گردید و چه زمان و چه شرایط سیاسی مساعد ایجاد شده به آن کمک کردند.



خلافت عرب ۶۳۲-۹۴۵

اجمالاً" باید گفت که بررسی منابع عرب نشان می‌دهد که عنصر ترک در دو مرحله مختلف وارد خلافت عرب و بطور کلی خاور نزدیک و میانه شد. در مرحله اول ترکان با اهداف سیاسی و اقتصادی بعنوان اسرای جنگی و غلامان به قلمرو خلافت آورده شدند و هیچگونه خطری برای منطقه نبودند. در این دوره (سده های ۹-۱۱ م.) تا ظهور ترکان سلجوقی هیچگونه پدیده ترکی شدن منطقه مشاهده نمی‌شود. مرحله دوم به مراتب خطرناک تر و خونین بار تر بود و صفحه خونینی در تاریخ کشورها و مردمان منطقه از جمله تاریخ ارمنیان باز نمود. فتوحات سلجوقی به طوایف ترک امکان داد بدون مشکل و براحتی وارد خاور نزدیک شوند و در اینجا اسکان گزیده بعدها مردمان ترک و آذربایجانی را تشکیل داده بعنوان هسته اساسی آنها عمل کنند.

ادامه دارد

شدند اما هیچگونه تغییری در ساختار قومی خاور نزدیک پدید نیاوردند. با این حال، رخنه آنان و تاسیس حکومت غزنوی و توسعه فعالیت آن در نواحی مرزی خلافت عرب زمینه را برای لشکرکشی مخرب و ویرانگرانه سلجوقی آماده ساختند و در طول آنها مهاجرت بزرگ طوایف ترک به سوی خاور نزدیک انجام شد.

ظهور ترکان سلجوقی در صحنه تاریخ برای مردمان و کشورهای خاورمیانه و نزدیک سرنوشت ساز بود. ترکان سلجوقی در اثر فعالیت های راهزنی و لشکرکشی های خود در سده های ۱۰-۱۱م. تدریجاً موفق شدند سیطره خود را بر ناحیه وسیعی حاکم سازند که از آسیای میانه تا ایران، آسیای صغیر، قفقاز و غیره امتداد می یافت و در این نواحی شرایط پیچیده و بغرنجی پدید می آمد. سلطان طغرل بیک سلجوقی پس از پیروزی در جنگ دانداکان (در تاجیکستان) به سال ۱۰۴۰ و اعلام حکومت، برای پنهان کردن ماهیت سلطه جویانه لشکرکشی ها، مهمترین مسئله خود را حفظ سنی گری اسلامی و آزاد سازی و رهانیدن خلافت عباسی از دست بویان ایرانی تبار قرار داد. این سیاست حيله گرانه بعدها باعث گرایش سنی ها بسوی او شد. طغرل پس از درهم شکستن حکومت غزنوی در دهه ۴۰ سده ۱۱م. لشکرکشی گسترده ای بسوی ایران، عراق، قفقاز و آسیای صغیر آغاز کرد و فتح آنها در دوران اولیه توسط نیروی های ترکمن اغوز عملی شد. با این حال لشکرکشی های او در دهه ۵۰ سده ۱۱م. شدت گرفت و او بغداد پایتخت خلفای عباسی را متصرف شد. آنگاه سلجوقیان متوجه شمال میانرودان و استان های مرکزی ارمنستان شدند.

مطالب موجود گواهی می دهد که اغوزهای رخنه یافته در نواحی یاد شده از طریق آذربایجان به آنجا راه یافته اند زیرا مهمترین مسیر برای رسیدن به قفقاز بود. طوایف اغوز در سال ۱۰۲۹م. به این استان خان نشین رخنه کردند یعنی زمانی که گروه های سلجوق-ترکمن و نیروهای مشترک اغوز-ترکمن از سلطان محمود غزنوی متحمل شکست شدند.

دامنه لشکرکشی های ترکان سلجوقی در دهه ۴۰ سده ۱۱م. تدریجاً گسترش یافت و تا پایان سده، ایران، عراق، سوریه، آذربایجان، ارمنستان، آسیای صغیر و نواحی دیگر فتح شدند. سلجوقیان، نقشه سیاسی این نواحی را کلاً متحول

Էդիկ Բաղդասարյանի նոր գրքերը

- ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը 10 ՀԱՏՈՐՈՎ
-ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը 7 հատորով
-Հայ-պարսիկ դարավոր բարեկամությունը –(Պարսկերեն) **دوستی دیرینه ایرانیان و ارمنیان**
-ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը՝
(պարսկերեն) **تاریخ ارمنیان ایران – جلد اول و دوم** 2 ՀԱՏՈՐՈՎ
-Աղվանք, Աղբեջան, Ոճրագործություն եւ Ծավալապաշտություն
(Պարսկերեն) **آذربایجان ، جنایت و توسعه طلبی**
-Հայ Գրականության Պատմություն 3 հատորով(Պարսկերեն) **تاریخ ادبیات ارمنی در ۳ جلد**
-Հայկական հարցը, հնագույն շրջանից մինչև մեր օրերը, 2 հատորով (Հայերեն)
-Շահնամը եւ հայկական աղբյուրները(Պարսկերեն) **شاهنامه و منابع ارمنی**
-Կոմիտասը եւ Հայ դասական երաժշտության ձևավորումը (Պարսկերեն) **کومیتاس و شکل گیری موسیقی کلاسیک ارمنی**
-Գիքորը, անգլերեն, 2014, **گیکور ، اثر هوانس تومانیان برگردان انگلیسی ، تورونتو ، ۲۰۱۴**
-Հոդվածների ժողովածու, Հատեր Ա,Բ- Պարսկերեն
گزیده مقاله های فارسی ادیبک باغدادساریان ، جلد ۱ و ۲ ، ، تورونتو ، ۲۰۱۴
-Հոդվածների ժողովածու, Հատեր Գ, Հայերեն
گزیده مقاله های ارمنی ادیبک باغدادساریان ، جلد سوم ، ، تورونتو ، ۲۰۱۴
-Հայ գրականության ընտրանի (Անգլերեն եւ պարսկերեն) Տրոնտո, 2014.
گزیده نثر و نظم ادبیات ارمنی ، برگردان فارسی و انگلیسی – ادیبک باغدادساریان ، تورونتو ۲۰۱۴
-Ակնարկ Պարսկերենի Ուղղագրության, (Պարսկերեն) Տրոնտո, 2014. – ادیبک باغدادساریان ، تورونتو ۲۰۱۴
-Թարգմանության մասին (Պարսկերեն), Տոտոնտո, 2014, – ادیبک باغدادساریان ، تورونتو ۲۰۱۴
-Հայոց ցեղասպանության Պատմություն, (Պարսկերեն), Տրոնտո, 2014
تاریخ نژادکشی ارمنیان ، فارسی – ادیبک باغدادساریان ، تورونتو ۲۰۱۴
-Հայկական Հարցի Մանիֆեստ , Տրոնտո 2014
-Իրանահայ Համայնքի Ամբողջական Համառոտ Պատմություն, 2 հատորով, հատոր 1 եւ 2, Տրոնտո, 2015:
-Անանիա Շիրակացի, Մաթեմատիկա, Պարսկերենի թարգմանեց Էդիկ Բաղդասարյանը, Տրոնտո, 2015:
Anania Shirakatsi, Mathematics, translated into Persian by Edic Baghdasarian, Toronto, 2015.
آنانیا شیراکاتسی دانشمند سده ۷ میلادی، ریاضیات ، ترجمه ادیبک باغدادساریان ، تورونتو ۱۳۹۴
-Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն, Պարսկերենի թարգմանեց Էդիկ Բաղդասարյանը, Տրոնտո, 2015:
Anania Shirakatsi, Cosmography, translated into Persian by Edic Baghdasarian, Toronto, 2015.
آنانیا شیراکاتسی دانشمند سده ۷ میلادی، کیهانشناسی ، ترجمه ادیبک باغدادساریان ، تورونتو ۱۳۹۴
-History of Mathematics in Armenia, in English, by Edic Baghdasarian (Ed. Germanic), Toronto, 2015
Մաթեմատիկան Հայաստանում (Անգլերեն), աշխատասիրեց Էդիկ Բաղդասարյանը (Էդ. Գերմանիկ), Տրոնտո, 2015
-Դավադրությունը Հայ Ժողովրդի Պատմության մեջ, Տրոնտո, Կանադա, 2016
-The Armenian Question Manifesto (in English) Toronto 2016
Edic Baghdasarian, The History of the Armenians in Iran, Two volumes, Vol. 1-2, in English, Toronto, 2016.
-Aran, Azerbaijan, Crime and expansionism, Toronto, 2016
Արան, Ադրբայջան, Հանցագործություն եւ Երկրամեծում Պարսկերեն, Տրոնտո, 2016, Rep. of Ararat, in Persian
Հայկական ընտանիք, պատմա-ազգագրական ակնարկ, Տրոնտո, 2016, The Armenian Family throughout the history,
Toronto, 2016, خانواده ارمنی در درازنای تاریخ ، تورنتو ۲۰۱۶
Encyclopedia of Armenian Historical Geography, in English, Toronto, 2017
Armenian Biographical Encyclopedia , in English, Toronto, 2017
Encyclopedia of Armenian Diaspora, in English, Toronto, 2017
Encyclopedia of the Armenian political History, Toronto 2017
Encyclopedia of the Armenian Science and Technology, Toronto 2018
Encyclopedia of the Armenian Press and Publication, Toronto 2018
Encyclopedia of the Armenian Cultural Monuments, Toronto 2018